

# Հավելվածներ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՈՂԻ և ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ՈՐԱԿԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՏՈՒԺԱՆՔՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀԱՅՏԱՏՈՒԻ ՀԱՅՏ

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՁԵՎ

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## 1.1 Սահմանումներ

(1) ԸՊ 1.1 գլխի համապատասխան դրույթի առնչությամբ.

(ա) Մեկնարկային օրը կհամարվի \_\_\_\_\_

## 1.2 Դիմումներ և ծանոթագրություններ

(1) ԸՊ 13.6 գլխի առնչությամբ.

(ա) **Վարձատուին** պետք է դիմել հետևյալ հասցեով.

Անուն՝ \_\_\_\_\_

Հասցեն՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

(բ) **Վարձակալին** պետք է դիմել հետևյալ հասցեով.

Անուն՝ \_\_\_\_\_

Հասցեն՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

(գ) **Հայտատուին** պետք է դիմել հետևյալ հասցեով.

Անուն՝ \_\_\_\_\_

Հասցեն՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

## 1.3 Լիազոր ներկայացուցիչներ

(1) ԸՊ 13.7 գլխի առնչությամբ.

(ա) ԸՊ 13.7 (1) (ա) կետի համաձայն **Վարձատուի լիազոր ներկայացուցիչն է.**

Անուն՝ \_\_\_\_\_

Հասցեն՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

(բ) ԸՊ 13.7 (1) (բ) կետի համաձայն **Վարձատուի լիազոր ներկայացուցչի պաշտոնական փոխարինողն է.**

Անուն՝ \_\_\_\_\_  
Հասցեն՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

(գ) ԸՊ 13.7 (1) (ա) կետի համաձայն **Վարձակալի լիազոր ներկայացուցիչն է.**

Անուն՝ \_\_\_\_\_  
Հասցեն՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

(դ) ԸՊ 13.7 (1) (բ) կետի համաձայն **Վարձակալի լիազոր ներկայացուցչի պաշտոնական փոխարինողն է.**

Անուն՝ \_\_\_\_\_  
Հասցեն՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

## 1.4 Վարձակալության վճարի վճարման ժամանակացույց

Վարձակալության վճարի ամբողջական գումարը կազմում է 89,749,000,000( ութսունինը միլիարդ յոթ հարյուր քառասունինը միլիոն) ՀՀ դրամ, որը պետք է վճարվի մաս-մաս՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի:

Վճարման ամսաթիվ	Վճարման գումար (ՀՀ դրամ)
Ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրվա ընթացքում:	856,500,000.00 (ութե հարյուր հիսունվեց միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2017 թ.	856,500,000.00 (ութե հարյուր հիսունվեց միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2018 թ.	1,060,500,000.00 (մեկ միլիարդ վաթսուն միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2018 թ.	1,060,500,000.00 (մեկ միլիարդ վաթսուն միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2019 թ.	1,468,500,000.00 (մեկ միլիարդ չորս հարյուր վաթսունույթ միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2019 թ.	1,468,500,000.00 (մեկ միլիարդ չորս հարյուր վաթսունույթ միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2020 թ.	1,872,500,000.00 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2020 թ.	1,872,500,000.00 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2021 թ.	2,689,500,000.00 (երկու միլիարդ վեց հարյուր ութսունինը միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2021 թ.	2,689,500,000.00 (երկու միլիարդ վեց հարյուր ութսունինը միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2022 թ.	3,168,500,000.00 (երեք միլիարդ հարյուր վաթսունույթ միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2022 թ.	3,168,500,000.00 (երեք միլիարդ հարյուր վաթսունույթ միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2023 թ.	3,607,500,000.00 (երեք միլիարդ վեց հարյուր յոթ միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2023 թ.	3,607,500,000.00 (երեք միլիարդ վեց հարյուր յոթ միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2024 թ.	3,672,500,000.00 (երեք միլիարդ վեց հարյուր յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2024 թ.	3,672,500,000.00 (երեք միլիարդ վեց հարյուր յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2025 թ.	4,074,500,000.00 (չորս միլիարդ յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2025 թ.	4,074,500,000.00 (չորս միլիարդ յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2026 թ.	4,091,000,000.00 (չորս միլիարդ իննսունմեկ



Վճարման ամսաթիվ	Վճարման գումար (ՀՀ դրամ) միլիոն
Դեկտեմբեր 1, 2026 թ.	4,091,000,000.00 (չորս միլիարդ իննսունմեկ միլիոն)
Հունիս 1, 2027 թ.	4,103,000,000.00 (չորս միլիարդ հարյուր երեք միլիոն)
Դեկտեմբեր 1, 2027 թ.	4,103,000,000.00 (չորս միլիարդ հարյուր երեք միլիոն)
Հունիս 1, 2028 թ.	3,425,500,000.00 (երեք միլիարդ չորս հարյուր քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2028 թ.	3,425,500,000.00 (երեք միլիարդ չորս հարյուր քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2029 թ.	3,516,000,000.00 (երեք միլիարդ հինգ հարյուր տասնվեց միլիոն)
Դեկտեմբեր 1, 2029 թ.	3,516,000,000.00 (երեք միլիարդ հինգ հարյուր տասնվեց միլիոն)
Հունիս 1, 2030 թ.	3,591,500,000.00 (երեք միլիարդ հինգ հարյուր իննսունմեկ միլիոն հինգ հարյուր հազար)
Դեկտեմբեր 1, 2030 թ.	3,591,500,000.00 (երեք միլիարդ հինգ հարյուր իննսունմեկ միլիոն հինգ հարյուր հազար)
Հունիս 1, 2031 թ.	3,677,000,000.00 (երեք միլիարդ վեց հարյուր յոթանասունյոթ միլիոն)
Դեկտեմբեր 1, 2031 թ.	3,677,000,000.00 (երեք միլիարդ վեց հարյուր յոթանասունյոթ միլիոն)

\* Առաջին վճարումը պետք է կատարվի Ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրվա ընթացքում:

Վարձակալության վճարի իրականացման բանկային հաշվի համարը

Բանկ \_\_\_\_\_

Հաշվի համարը \_\_\_\_\_

SWIFT \_\_\_\_\_

### 1.5 Տուժանքների վճարման բանկային հաշիվը

Հավելված 6-ի համաձայն վճարման ենթակա տուժանքների փոխանցման բանկային հաշվի համարը

Բանկ \_\_\_\_\_

Հաշվի համարը \_\_\_\_\_

SWIFT \_\_\_\_\_

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- (1) Կողմերն ընդունում և համաձայնվում են, որ Ծառայությունները Բաժանորդներին պետք է մատուցվեն Հավելված 6-ով սահմանված՝ դրանց առկայության, շարունակականության և որակի պահանջների և պայմանների համաձայն այնպես, որ ապահովվի ծառայության արդյունավետ մատուցում Բաժանորդներին և շրջակա միջավայրի պաշտպանություն՝ սույն Պայմանագրի դրույթների և Կիրառվող համապատասխան օրենսդրության համաձայն: Ծառայությունների մակարդակը պետք է առնվազն համապատասխանի Հավելված 6-ում սահմանված Կատարողական չափանիշներին:
- (2) Վարձակալը պատասխանատու է Սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հետ կապված ցանկացած անհրաժեշտ գործողության իրականացման համար: Դրանք ներառում են հետևյալը, սակայն չեն սահմանափակվում դրանցով:

### 1. Տեխնիկական կառավարում

ԸՊ 7-րդ Հոդվածի պահանջների իրականացման համար տեխնիկական գործունեության շրջանակներում Վարձակալի պատասխանատվությունը ներառում է հետևյալը, սակայն չի սահմանափակվում դրանցով.

- (1) Զրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգի Գույքի շահագործում.
- (2) Քիմիկատների ձեռք բերում և մատակարարում,
- (3) Գույքի, փոքր սարքավորումների և գործառնական սարքավորումների ձեռքբերում, վերականգնում, պահպանում և վերանորոգում,
- (4) Էլեկտրաէներգիայի, վառելիքի և քսանյութերի ձեռքբերում և մատակարարում,
- (5) Գույքի, ներառյալ մեխանիկական և էլեկտրական սարքավորումների, պահպանում,
- (6) Տեխնիկական ընթացակարգերի սահմանում,
- (7) Ծառայության մակարդակների չափում և Հավելված 6-ով սահմանված Կատարողական չափանիշների ապահովում,
- (8) Հոսակորուստների որոնում և վերահսկողություն, հոսակորուստների կանխարգելմանն ու հոսակորուստների կրճատմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում,
- (9) Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի(ՊԿԱԾ) մշակում և իրականացում համաձայն Հավելված 2-ի 4-րդ կետի,,
- (10) Գույքի ուսումնասիրություն և դրանց քանակների որոշում՝ պահպանման և վերանորոգման աշխատանքների ժամանակացույցի մշակման և իրականացման նպատակով,
- (11) Գրանցված և նոր բաժանորդների ջրի սպառման հաշվառում.
- (12) Անձրևաջրերի համակարգերի շահագործում և պահպանում՝ Հավելված 3-ին համապատասխան,
- (13) Երևանի մետրոպոլիտենի ստորգետնյա ջրերի հեռացման համակարգի պահպանում,

- (14) Մակերևութային ջրերի հեռացման ստորգետնյա համակարգերի պահպանում այնտեղ, որտեղ դրանք միացված են կեղտաջրերի հեռացման համակարգին: Մակերևութային ջրերի հեռացման ծառայությունները ապահովվելու են Երևան քաղաքում: Մակերևութային ջրերի հեռացումը մասամբ կատարվելու է կոյուղու համակարգի և մասամբ քաղաքային ջրատարների օգնությամբ: Կեղտաջրերի մի մասը հեռացվելու է մակերևութային ջրերի դրենաժի միջոցով: Այս ծառայությունը պետք է ապահովվի Վարձակալի կողմից:
- (15) Կիրառվող օրենսդրության պահանջների համաձայն հակահրդեհային նպատակներով ջրի պաշարների անվճար ապահովում:
- (16) Կիրառվող օրենսդրության պահանջներին համաձայն հանրային ցայտաղբյուրների անվճար ջրամատակարարման ապահովում:

## **1.1 Ծառայությունների և որակի չափանիշներ**

### **1.1.1 Ընդհանուր դրույթներ**

Վարձակալը պարտավոր է Ծառայությունների մատուցման համար օգտագործվող Գույքը պահպանել լավ աշխատանքային վիճակում (ընդունման պահին դրանց վիճակի համեմատ)՝ համաձայն Լավագույն արդյունաբերական պրակտիկայի և Խելամիտ ինժեներական պրակտիկայի, պահպանի և վերանորոգի իր հաշվին: Բացառություն է կազմում Աերացիայի կեղտաջրերի մաքրման կայանը, որի համար պահանջվում է միայն սույն Հավելվածի բաժին 11-ում նկարագրված պահպանման և շահագործման աշխատանքների իրականացումը:

### **1.1.2 Ջրի քանակություն**

Սույն Պայմանագրի դրույթների համաձայն Վարձակալը պարտավոր է Սպասարկման տարածքում հասարակական և մասնավոր ողջամիտ պահանջարկին համապատասխան ջրի քանակ մատակարարել:

### **1.1.3 Ջրաղբյուրներ**

- (1) Վարձակալը կարող է շարունակել Ընկերության կողմից Ուժի մեջ մտնելու օրն օգտագործվող կամ վերջինիս տրամադրության տակ գտնվող բոլոր ջրաղբյուրներից ջրառի իրականացումը՝ Կիրառվող օրենսդրության և Ջրօգտագործման ու Ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների համաձայն:
- (2) Վարձակալը պարտավոր է Սանիտարական գոտիները պահպանել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի թիվ 803 հրամանով հաստատված «Խմելու ջրի տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ. սանիտարական նորմեր և կանոններ N 2-III-Ա2-2» պահանջների համաձայն:

### **1.1.4 Կառույցների պաշտպանություն**

Իր գործառույթների կատարման ընթացքում Վարձակալը կարող է Սպասարկման տարածքում կամ որևէ Հողում, որի նկատմամբ Վարձակալը ձեռք է բերել կամ նրան

շնորհվել են անցման, անհրաժեշտ իրավունքներ, սերվիտուտներ կամ այլ իրավունքներ, կառուցել և շահագործել խողովակներ, դրենաժներ, կոյուղագծեր, ջրուղիներ, կապտաժներ և այլ կառույցներ՝ կեղտաջրերի հոսքի ուղղորդման, մաքրման, այդ տարածքներում առաջացող կամ ներհոսող կեղտաջրերից ազատման համար, ինչպես նաև՝ Վարձակալի կողմից օգտագործվող կամ նրա տրամադրության տակ գտնվող կամ էլ այն ջրաղբյուրների ջրերի աղտոտումը կանխելու նպատակով, որոնց նկատմամբ ջրօգտագործման թույլտվություն ունի Վարձակալը:

#### **1.1.4.1 Վարձակալի գործողությունների հետևանքով աղտոտման դեպքեր**

Վարձակալն իր հաշվին պարտավոր է կիրառել լավագույն հասանելի միջոցները, որպեսզի աղբյուրները, մաքրման կայանները, ջրագծերը և Գույքը զերծ պահի իր իսկ գործողությունների հետևանքով աղտոտումից: Ի լրումն Կիրառվող օրենսդրության պահանջների՝ նման աղտոտման դեպքերի մասին Վարձակալը պարտավոր է հնարավորինս արագ կերպով տեղեկացնել Վարձատուին, սակայն ոչ ուշ, քան դրանց մասին տեղեկանալուց մեկ (1) ժամվա ընթացքում:

#### **1.1.4.2 Երրորդ անձանց գործողությունների հետևանքով աղտոտման դեպքեր**

Ի լրումն Կիրառվող օրենսդրությամբ սահմանված պահանջների՝ Վարձակալը պարտավոր է Ծառայությունների վրա ազդող Երրորդ կողմի գործողությունների արդյունքում տեղի ունեցած ցանկացած աղտոտման դեպքերի մասին հնարավորինս արագ կերպով տեղեկացնել Վարձատուին, սակայն ոչ ուշ, քան դրանց մասին տեղեկանալուց մեկ (1) ժամվա ընթացքում:

#### **1.1.5 Ջրամատակարարում**

- (1) Վարձատուն պարտավոր է Վարձակալին տրամադրել ջրամատակարարման ցանցի սեկտորների պլանները: Վարձակալը պարտավոր է ուսումնասիրել ներկա և նախատեսվող ջրամատակարարման գոտիները, որոնք բոլորը միասին գրավում են ամբողջ Սպասարկման տարածքը:
- (2) Առանց սույն Պայմանագրով իրեն վերագրված պարտականությունների սահմանափակման՝ Վարձակալը պարտավոր է ջրամատակարարման առանձին գոտիների ներսում ջրի քանակների չափման համապատասխան տեխնոլոգիաներ կիրառել, որպեսզի համապատասխանի.
  - (ա) պայմանագրով նախատեսված որակին և ճնշման չափանիշներին, և
  - (բ) Կատարողական չափանիշներին:
- (3) Վարձակալը պետք է Սպասարկման տարածքում իրականացնի Գույքի պահպանման ծրագրված աշխատանքները (որոնք այս նպատակների համար ներառում են նորոգման և բարելավման աշխատանքները) համաձայն այն Բաժանորդներին նախապես տրամադրված ծանուցման, որոնց վրա ազդեցություն կթողնեն տվյալ աշխատանքները:
- (4) Վարձակալը Սպասարկման տարածքում պետք է իրականացնի վթարների վերացման աշխատանքներ՝ նվազագույն անհանգստություն հասցնելով

Բաժանորդներին, ճանապարհների համար պատասխանատու մարմիններին կամ Երրորդ անձանց:

### **1.1.6 Սպասարկման անընդհատությունը**

Վարձակալը Բաժանորդներին պարտավոր է ապահովել շարունակական ջրամատակարարում՝ համաձայն Կատարողական չափանիշների, որոնք չափվում են Հավելված 6-ում ներկայացված մեթոդոլոգիայի համաձայն:

### **1.1.7 Ջրի որակ**

#### **1.1.7.1 Ջրի որակ և մոնիտորինգ**

Վարձակալը պարտավոր է խմելու ջրի որակի մոնիտորինգ իրականացնել՝ համաձայն Հավելված 6-ում բերված խմելու ջրի որակի չափանիշների: Մոնիտորինգը պետք է շարունակաբար իրականացվի, որպեսզի այն խստորեն համապատասխանի Հավելված 6-ով սահմանված չափանիշներին:

#### **1.1.7.2 Աղբյուրներից վերցվող ջուր**

- (1) Վարձակալը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի ապահովի, որ աղբյուրներից վերցվող ջուրն ունենա մշակման ենթարկվելու համար համապատասխան որակ: Այդ գործողությունները պետք է ներառեն ավտոմատացված կամ ձեռքով իրականացվող նմուշառում և Հավելված 6-ում սահմանված կարգով ջրի մոնիտորինգի իրականացում՝ նպատակ ունենալով որոշել ջրառի ֆիզիկական, քիմիական և մանրէաբանական պարամետրերը:
- (2) Եթե աղտոտման այնպիսի դեպք է տեղի ունենում, որը կարող է էապես ազդել ջրի որակի վրա, Վարձակալը պարտավոր է աղտոտման բացահայտման և դեպի ջրաղբյուրներ, մատակարարման կետեր, քլորակայան կամ ջրամատակարարման համակարգ աղտոտման տարածման կանխման նպատակով բոլոր խելամիտ գործողությունները ձեռնարկել, ինչպես նաև կատարված և կատարվելիք գործողությունների վերաբերյալ ընթացիկ տեղեկատվություն տրամադրել Վարձատուին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը: Վարձակալը Վարձատուին պետք է տեղեկացնի նման դեպքերի և դրանց վերացման նպատակով ընդունված գործողությունների մասին: Նման գործողությունների դիմաց փոխհատուցման հարցը պետք է Կողմերի միջև համաձայնեցվի բանակցությունների միջոցով, որոնք աղտոտման յուրաքանչյուր դեպքի առնչությամբ կարող են նախաձեռնվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից:

#### **1.1.7.3 Խմելու ջուր**

- (1) Բաժանորդներին մատակարարվող ջուրը պետք է համապատասխանի Հավելված 6-ում ներկայացված խմելու ջրի որակի չափանիշներին: Կիրառվող օրենսդրության համաձայն՝ Վարձակալը պատասխանատու է Բաժանորդներին մատակարարված

ջրի՝ մշակված ջրի որակի սահմանված ստանդարտներին համապատասխանության համար՝ ջրի նմուշառման և դրա գիտական անալիզի ենթարկելու միջոցով:

- (2) Քլորացման կայաններից մշակված ջուրը և հորերի ջուրը պետք է նույնպես համապատասխանեն Հավելված 6-ում բերված խմելու ջրի որակի ստանդարտներին:
- (3) Հավելված 6-ի պահանջների համաձայն՝ ջրի նմուշները պետք է վերցվեն նմուշառման կետերում:

## **2. Առևտրային կառավարում**

Վարձակալի պարտականությունները առևտրային կառավարման առումով ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

- (1) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացումների դիմումների կառավարում,
- (2) իր Բաժանորդների հաշիվների կառավարում,
- (3) մատուցված ծառայությունների հաշիվների ներկայացում՝ ներառյալ բաժանորդների ջրաչափերի ցուցմունքների գրանցումը,
- (4) մատուցված Ծառայությունների դիմաց վարձավճարների գանձում,
- (5) Բաժանորդների տվյալների կառավարում,
- (6) Բաժանորդների՝ համակարգից անջատումների կառավարում,
- (7) չգրանցված միացումների հայտնաբերում, ուսցիոնալացում, օրինականացում և վերացում (ըստ հանգամանքների),
- (8) Բաժանորդների հարցումների, բողոքների և նրանց հետ վեճերի կառավարում,
- (9) Առևտրային ընթացակարգերի հետագա զարգացում և բարելավում (այդ ընթացակարգերը սահմանվել և բարելավվել են Կառավարման պայմանագրի ներքո ներգրավված Մասնավոր Օպերատորի կողմից՝ ներառյալ համակարգչային ծրագրի ներդրումը և այլն: Վարձակալը կորոշի նույն համակարգերի օգտագործման կամ նորերի ներդրման նպատակահարմարությունը):

## **3. Վարչական և ֆինանսական կառավարում**

Վարչական և ֆինանսական կառավարման շրջանակներում Վարձակալի պարտականությունները ներառում են հետևյալը, սակայն չեն սահմանափակվում միայն դրանցով.

- (1) Անձնակազմի աշխատանքի ընդունում, ուսուցում և զարգացում,
- (2) Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և տվյալների բազաների ընդունում, պահպանում և հարմարեցում (եթե անհրաժեշտ է՝ բարելավում),
- (3) Առկա հաշվապահական հաշվառման ընթացակարգերի իրականացում և հաշիվների կազմում, անհրաժեշտության դեպքում՝ հաշվապահական համակարգերի բարելավում,
- (4) Հավելված 7-ի պահանջների համաձայն Հաշվետվությունների նախապատրաստում և տրամադրում Վարձատուին,
- (5) բնապահպանական և սոցիալական ազդեցության մոնիտորինգ՝ համաձայն ՄՖԿ պահանջների (ինչպես սահմանված է Հավելված 7-ում),
- (6) Ձեռնարկների և որակի ապահովման համակարգերի մշակում,
- (7) Ֆինանսական բյուջեների և Տարեկան բիզնես պլանի կազմում, և

- (8) ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ Տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմում և Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների, ինչպես նաև աուդիտ արված ֆինանսական հաշվետվությունների տրամադրում:

Ջրի որակի վրա ազդեցություն ունեցող աշխատանքային ընթացակարգերը և որակի ապահովման համակարգերը պետք է մշակվեն ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ծառայությունների հետ համատեղ:

#### 4. Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիր

- (1) Վարձակալը պարտավոր է իրականացնել Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիր (այսուհետև՝ ՊԿԱԾ): Այս ծրագրի նպատակը ընդունման պահին Գույքի վիճակի զուտ պահպանումից բացի, դրա վիճակի որոշակի բարելավումն է: Այս նպատակով Վարձակալը պարտավոր է կազմել և իրականացնել ՊԿԱԾ, որը բնորոշվում է որպես պայմանագրային յուրաքանչյուր տարվա կտրվածքով պահպանման և կապիտալ վերանորոգման համար սահմանված նվազագույն կապիտալ ծախսերի իրականացում:
- (2) Վարձակալը ՊԿԱԾ-ը պարտավոր է իրականացնել Լավագույն արտադրական պրակտիկային և Խելամիտ ինժեներական պրակտիկային համապատասխան:
- (3) Աղյուսակ 2-1-ում ներկայացված են ՊԿԱԾ համար նախատեսված կապիտալ ծախսերի նվազագույն չափաքանակները:

#### Աղյուսակ 2-1: ՊԿԱԾ տարեկան նվազագույն չափաքանակները

Պայմանագրային տարի	Նվազագույն կապիտալ ծախս ( միլիոն ՀՀ դրամ առանց ԱԱՀ)
1	1500
2	1750
3	2250
4	2750
5	2750
6	2750
7	2750
8	2750
9	2750
10	2750
11	2750
12	2500
13	2500
14	2500
15	2500

- (4) Վարձակալը կարող է Պայմանագրի առաջին տարիների համար ՊԿԱԾ-ով ավելի մեծ գումարներ նախատեսել, քան նշված է Աղյուսակ 2-1-ում, հետագա տարիների համար Աղյուսակ 2-1-ում նշված գումարներից ավելի ցածր գումար նախատեսելու հնարավորությամբ, սակայն Պայմանագրային որևէ տարվա համար ՊԿԱԾ համաձայն իրականացված կապիտալ ծախսերը պետք է կազմեն ոչ պակաս քան 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, իսկ Պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում ՊԿԱԾ-ի համաձայն իրականացված կապիտալ աշխատանքների ընդհանուր գումարը պետք է կազմի առնվազն 37,500,000,000 (երեսունյոթ միլիարդ հինգ հարյուր )միլիոն ՀՀ դրամ:
- (5) Վարձակալը պարտավոր է Պայմանագրային յուրաքանչյուր տարվա սկզբից առնվազն 60 օր առաջ Վարձատուին ներկայացնել տվյալ Պայմանագրային տարվա ՊԿԱԾ-ի նախագիծը: Պայմանագրային առաջին տարվա համար ՊԿԱԾ-ի նախագիծը պետք է ներկայացվի Մեկնարկային օրվանից 90 օրվա ընթացքում:
- (6) ՊԿԱԾ-ը պետք է ներկայացնի նվազագույն պահանջվող կապիտալ ծախսերի իրականացման վերաբերյալ Վարձակալի ծրագիրը և հիմնավորի ծրագրով նախատեսված կապիտալ աշխատանքների նպատակահարմարությունը դրանց անհապաղության և Գույքի վրա դրանց ունեցած ազդեցության տեսանկյունից՝ ըստ Երևան քաղաքի, քաղաքային համայնքների և գյուղական համայնքների՝ առանձին Գույքի միավորների և/կամ օբյեկտների: ՊԿԱԾ-ով Պայմանագրային տարվա համար նախատեսված կապիտալ ծախսերի ընդհանուր գումարի շուրջ 85 տոկոսը պետք է բաշխված լինի ըստ առանձին Գույքի միավորների և/կամ օբյեկտների, մնացած 15 տոկոսը պահեստավորված լինի չնախատեսված կապիտալ ծախսերի իրականացման համար: Չնախատեսված կապիտալ ծախսերի ուղղությունները որոշվում են Կողմերի համաձայնությամբ տվյալ Պայմանագրային տարվա երկրորդ կիսամյակում, համաձայն սույն կետի (6) ենթակետի կանոնակարգման, եթե Կողմերը այլ համաձայնության չեն եկել:
- (7) Վարձատուն տվյալ Պայմանագրային տարվա ՊԿԱԾ-ի նախագիծը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում պետք է իր առարկությունները, այդպիսիք լինելու դեպքում, ներկայացնի Վարձակալին: Վարձակալը Վարձատուի առարկությունները ստանալուց հետո 15 օրվա կամ դրանց բացակայության դեպքում ՊԿԱԾ-ի նախագծի ներկայացման օրվանից 20 օրվա ընթացքում պետք է Վարձատուին ներկայացնի ավարտական ՊԿԱԾ-ը՝ կցելով Վարձատուի առարկությունների, այդպիսիք լինելու դեպքում, վերաբերյալ Վարձակալի կարծիքը: Վարձակալը տվյալ Պայմանագրային տարում ՊԿԱԾ-ը իրականացնում է իր կողմից ներկայացված ավարտական ՊԿԱԾ-ի համաձայն: Վարձատուն կարող է դիմել Անկախ Տեխնիկական Աուդիտորին, եթե ավարտական ՊԿԱԾ-ով Վարձակալի կողմից հաշվի չեն առնվել Վարձատուի հիմնավոր առարկությունները:
- (8) Յուրաքանչյուր Պայմանագրային տարում Վարձակալը՝ առանց Վարձատուի համաձայնության կարող է տվյալ տարվա ՊԿԱԾ-ից շեղվել 10 տոկոսից ոչ ավել՝ պահպանելով Հավելված 2-ի 4,(4) կետի պահանջները:



- (9) Յուրաքանչյուր Պայմանագրային տարվա մինչև Հուլիսի 1-ը Վարձակալը պարտավոր է ներկայացնել նախորդ Պայմանագրային տարվա ՊԿԱԾ-ի հաշվետվությունը, որտեղ պետք է ներկայացված լինեն ՊԿԱԾ-ի շրջանակներում կատարված կապիտալ ծախսերի բացվածքը՝ ըստ առանձին Գույքի միավորների և կամ օբյեկտների: ՊԿԱԾ-ի հաշվետվությունը պետք է ուսումնասիրվի և աուդիտի ենթարկվի Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից՝ Պայմանագրի ԸՊ 6.7.1 և 6.7.2 կետերի համաձայն:

## 5. Ցանցի ընդլայնում

- (1) Վարձակալն իրավունք ունի իր հաշվին և իր ռիսկով Սպասարկման տարածքում ընդլայնել ցանցը: Ցանցի ընդլայնումները հանդիսանում են Գույքի մի մասը, և ցանցի ընդլայնման աշխատանքների ավարտից հետո Վարձակալը պարտավոր է դրանց սեփականության իրավունքն անհատույց փոխանցել Վարձատուին: Եթե Պայմանագիրը չպատճառաբանված կերպով վաղաժամկետ դադարեցվի Վարձատուի կողմից, Վարձակալը պետք է փոխհատուցվի յուրաքանչյուր ընդլայնման արդյունքում ստեղծված հիմնական միջոցի չամորտիզացված արժեքի չափով:
- (2) Վարձակալը պատասխանատու չէ ցանցի ընդլայնումների համար: Իրենց միացումների համար պատասխանատու են նոր Բաժանորդները կամ շինարարական կազմակերպությունները:
- (3) Նոր բնակելի շենքեր կամ արտադրական կառույցներ կառուցող կազմակերպությունները կամ Անձինք կարող են իրենց հաշվին միանալ ջրամատակարարման և կոյուղու ցանցին: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի միացումների նախագծումն ու իրականացումը նախապես պետք է հաստատվեն Վարձակալի կողմից: Ընդլայնման վերաբերյալ բոլոր առաջարկները պետք է ներկայացվեն Վարձակալին, որը կարող է ընդունել, մերժել կամ փոփոխել դրանք:
- (4) Աշխատանքները պետք է նախագծվեն և իրականացվեն Խելամիտ ինժեներական պրակտիկայի և Կիրառվող օրենսդրության պահանջներին համապատասխան:

## 6. Հիմնական վերանորոգումներ և փոխարինումներ

Գույքի անսարքությունների կամ շարքից դուրս գալու դեպքում (ինչն էական կերպով, ամբողջությամբ կամ մասամբ, կխանգարի Ծառայությունների մատուցմանը), բոլոր անհրաժեշտ վերանորոգումները պետք է կատարվեն Վարձակալի կողմից՝ ջանք չխնայելով նվազագույնի հասցնելու Բաժանորդներին պատճառած անհարմարությունը:

## **7. Միացումներ համակարգին**

### **7.1. Ջրամատակարարման միացումներ**

Գույքի մեջ են մտնում նաև սպասարկման միացումները: Վարձակալը պատասխանատու է միացումների Պահպանման և Վերանորոգման համար:

Միացումները հիմնականում ներառում են բաշխիչ ցանցից ձգվող խողովակները՝ ներառյալ ջրաչափի բետոնե խուցը, եթե դրա կարիքը կա, և ջրաչափի երկու կողմերում տեղադրված փականները, ինչպես նաև բազմաբնակարան ներբակային ցանցը մինչև շենքի արտաքին պատի սահմանագիծը:

Վարձակալը պատասխանատու է նաև բազմաբնակարան շենքերի նկուղներում և ձեղնահարկերում տեղակայված ջրի խողովակների պահպանման և վերանորոգման համար, երբ դա նախատեսված է պայմանագրային հիմունքներով և (կամ) համաձայն Կիրառվող օրենսդրության: Վարձակալը իր այս պատասխանատվությունը կարող է և/կամ պարտավոր է իրականացնել Կապալառուի միջոցով համաձայն Կիրառվող օրենսդրության

### **7.2. Ջրաչափերի տրամադրում Բաժանորդներին**

Եթե Վարձակալի և Վարձատուի միջև որևէ այլ համաձայնություն չկա, սույն Պայմանագրի համաձայն բոլոր Բաժանորդները պետք է ջրաչափ ունենան, բացառությամբ եթե այլ Բաժանորդների հետ պայմանագրում այլ բան է նախատեսված:

Բաժանորդների ջրաչափերը պետք է տեղադրվեն Կիրառվող օրենսդրության պահանջների համաձայն:

Վարձակալը պետք է իրավունք ունենա ստուգաչափելու Բաժանորդների ջրաչափերը՝ Վարձակալի հայեցողությամբ և միջոցներով, և եթե ջրաչափերը հանդիսանում են Բաժանորդների սեփականությունը, ստուգաչափումը պետք է կատարվի Բաժանորդների հետ պայմանագրի համաձայն:

Վարձակալը պետք է իրավունք ունենա փոխարինելու Բաժանորդների ջրաչափերը՝ Վարձակալի հայեցողությամբ և միջոցներով կամ պետության կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի շրջանակում: Վարձակալի կողմից տեղադրված Բաժանորդների ջրաչափերը պետք է դիտվեն որպես ջրային ենթակառուցվածքի մաս, այդպիսով հանդիսանալով վարձակալության ենթակա Գույքի մաս:

### **7.3. Բաժանորդների ջրաչափում**

Վարձակալը պատասխանատու է բոլոր ջրաչափ ունեցող Բաժանորդների ջրամատակարարման միացումների սպառման չափման համար: Վարձակալը պարտավոր է ապահովել, որ Բաժանորդի մոտ տեղադրված ջրաչափերը համապատասխանեն Բաժանորդի ջրի պահանջարկին, և որ ջրաչափը նախագծված, արտադրված և տեղադրված լինի Լավագույն արդյունաբերական պրակտիկային համապատասխան կերպով:

Վարձակալի և Ընկերության միջև ջրաչափերի ցուցմունքների բաժանման կարգը. Ջրաչափ ունեցող յուրաքանչյուր Բաժանորդի համար Մեկնարկային օրվանից առաջ ջրաչափերի վերջին ցուցմունքի գրանցումը և Մեկնարկային օրվանից հետո ընկնող առաջին գրանցումը պետք է իրականացվի համատեղ՝ Վարձակալի և Ընկերության կողմից: Ընկերության և Վարձակալի միջև այս երկու գրանցումների տարբերությունը պետք է բաշխվի հետևյալ կերպ.

- Ընկերության կողմից մատակարարված ծառայությունների ծավալը հաշվարկվում է ջրաչափի վերը նշված երկու ցուցմունքների տարբերությունը բաժանելով դրանց գրանցումների միջև ընկած օրերի քանակի վրա և բազմապատկելով վերջին ցուցմունքի գրանցումից մինչև Մեկնարկային օրվան նախորդող օրն ընկած օրերի քանակով,
- Վարձակալի կողմից մատակարարված ծառայությունների ծավալը հաշվարկվում է ջրաչափի վերը նշված երկու ցուցմունքների տարբերությունը բաժանելով դրանց գրանցումների միջև ընկած օրերի քանակի վրա և բազմապատկելով Մեկնարկային օրվանից մինչև Վարձակալի կողմից առաջին ցուցմունքի գրանցումն ընկած օրերի քանակով:

Ընկերությունը և Վարձակալը համապատասխանաբար պարտավոր են Բաժանորդներին հաշիվ ներկայացնել վերը նշված կերպով հաշվարկված մատուցված ծառայությունների ծավալների դիմաց:

#### **7.4. Ապօրինի միացումներ**

Վարձակալը Կիրառվող օրենսդրությամբ թույլատրված չափով իրավասու է դադարեցնել չվճարող Բաժանորդների ջրամատակարարումը:

Վարձակալը պարտավոր է ապօրինի միացումների բացահայտման ուղղությամբ միջոցներ ձեռնարկել, որից հետո անջատել կամ օրինականացնել դրանք՝ Բաժանորդի հետ պայմանագիր կնքելու միջոցով:

Վարձակալը պարտավոր է հաշվետվություններ ներկայացնել ապօրինի միացումների կարգավիճակի վերաբերյալ և ոչ տեխնիկական պատճառներով չհաշվառվող ջրի ծավալների գնահատական տրամադրել:

#### **7.5. Կեղտաջրերի հեռացման համակարգին միացումներ**

Կեղտաջրերի հեռացման համակարգին միացումները պետք է կատարվեն համաձայն Լավագույն արդյունաբերական պրակտիկայի պահանջների:

Վարձակալը պատասխանատու չէ կեղտաջրերի հեռացման համակարգին արված միացումների այն մասի պահպանման և վերանորոգման համար (ներառյալ խցանումների վերացումը), որոնք գտնվում են Բաժանորդի տարածքում (սակայն Բաժանորդը կարող է դիմել Վարձակալին իր՝ Բաժանորդի հաշվին այդ աշխատանքները կատարելու խնդրանքով): Վարձակալը պատասխանատու է կեղտաջրերի հեռացման համակարգին Բաժանորդների միացումների այն մասի Պահպանման և Վերանորոգման համար (ներառյալ խցանումների վերացումը), որը Բաժանորդի սեփականության տարածքում չէ, այլ այն հատվածն է, որը փողոցների տակ է գտնվում և միանում է քաղաքի կոյուղատար ցանցի կոլեկտորին : Տարակարծություններից խուսափելու համար Վարձակալը պատասխանատու է, բազմաբնակարան շենքերի ջրահեռացման ներբակային ցանցի՝ ներառյալ առաջին դիտահորը պահպանման և վերանորոգման համար:

Վարձակալի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի հեռացման ցանցին միացումների անսարքության դեպքում Վարձակալը պարտավոր է ամեն ջանք գործադրել համակարգի գործունեությունն անսարքության մասին տեղեկանալու պահից 3 օրվա ընթացքում այն վերացնելու համար: Դա վերաբերում է բոլոր դեպքերին բացառությամբ, եթե միացումների հիմնավոր վերանորոգման կարիք կա. այդ դեպքում վերանորոգման ժամկետը պետք է համաձայնեցվի Բաժանորդի հետ:

## 8. Այլ ծառայություններ

- (1) Երևանի Մետրոպոլիտեն. Ընկերությունն իրականացնում է Երևանի Մետրոպոլիտենի 6 ջրթող կետերից ստացվող ստորգետնյա ջրերի հավաքման ծառայությունները, ինչպես նաև պատասխանատու է կեղտաջրերի հեռացման այն համակարգի համար, որի միջոցով ստորգետնյա ջրերը հեռացվում են դեպի քաղաքի կենտրոնում գտնվող ջրանցքների ընդունիչ կետերը: Այս ծառայության դիմաց Ընկերությունը վճար է գանձում: Այս ծառայության մատուցումը պետք է շարունակվի Վարձակալի կողմից:
- (2) Որտեղ անհրաժեշտ է, Վարձակալը պետք է տեղադրի, շահագործի և պահպանի անվտանգության պաշտպանության համակարգեր՝ Համաձայն Կիրառվող օրենսդրության:
- (3) Հանրային ցայտաղբյուրներ. Վարձակալը պետք է ապահովի անվճար ջրամատակարարում և ջրահեռացում /վերջինիս առկայության դեպքում/ հանրային ցայտաղբյուրներին՝ Կիրառվող օրենսդրության համաձայն: Վարձակալը պատասխանատուություն չի կրում հանրային ցայտաղբյուրների շահագործման և պահպանման համար:
- (4) Հիդրանտների միջոցով օգտագործվող ջրի դիմաց վճարները գանձվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված մանրաձախ ջրամատակարարման սակագնով, բացառությամբ հրշեջ ծառայությունների կողմից օգտագործված ջրի, որը պետք է տրամադրվի անվճար:

## 9. Սպասարկման տարածքի ընդլայնում

Վարձատուն կարող է առաջարկել Վարձակալին ընդլայնել սպասարկման տարածքը.

- (1) Աճողական կարգով մինչև 1 /մեկ/ միլիոն խորանարդ մետր ջրամատակարարման կամ մինչև 20,000 /քսան հազար/ բաժանորդ սպասարկման տարածքի ընդլայնման առաջարկի դեպքում Վարձակալը 60 օրվա ընթացքում պետք է համապատասխան դիմում ներկայացնի ՀԾԿՀ Լիցենզիայում նման ընդլայնումները արտացոլելու խնդրանքով: Այս դեպքում Վարձակալը չի կարող պահանջել Պայմանագրի այլ դրույթների փոփոխում և կամ որևէ փոխհատուցում:
- (2) Աճողական կարգով 1 /մեկ/ միլիոն խորանարդ մետր ջրամատակարարման կամ 20,000 /քսան հազար/ բաժանորդից ավել սպասարկման տարածքի ընդլայնման առաջարկի դեպքում կիրառվում է Հավելված 2-ի 12 կետով նկարագրված ընթացակարգը:
- (3) Սպասարկման տարածքը կհամարվի ընդլայնված Լիցենզիայում համապատասխան փոփոխությունները ուժի մեջ մտնելուց հետո:

## 10. Մեծածախ ջրամատակարարում և ջրահեռացում

Վարձակալը մեծածախ ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացնում է Լիցենզիայի և ՀԾԿՀ-ի կողմից սահմանված սակագների համաձայն:

## 11. Կեղտաջրերի մաքրման կայանների կողմից տրամադրվող ծառայություններ

- (1) Վարձակալը պետք է շահագործի և պահպանի հետևյալ կեղտաջրերի մաքրման կայանները /ԿՄԿ/ այնքանով որքանով դա թույլ է տալիս ԿՄԿ-ների տեխնիկական վիճակը.

Հ.հ	ԿՄԿ	Միացված բնակավայրերի անվանումները	Նախագծային կարողությունը մ3/օր	Մաքրման իրական եղանակը	Գործարկման տարին	Վիճակը (լավ, ընդունելի, վատ, վնասված/կոտրված)
1	Գավառ ԿՄԿ	Գավառ	19,008	մեխանիկական	2013	լավ
2	Մարտունի ԿՄԿ	Մարտունի	9,504	մեխանիկական	2013	լավ
3	Վարդենիս ԿՄԿ	Վարդենիս	9,504	մեխանիկական	2013	լավ
4	Դիլիջան ԿՄԿ	Դիլիջան	19,008	մեխանիկական	2015	լավ
5	Ջերմուկ ԿՄԿ	Ջերմուկ	9,504	մեխանիկական	2015	լավ
6	Աէրացիա ԿՄԿ	Երևան	-	-	-	Վատ/վնասված

Վարձակալը պարտավոր է վերը բերված աղյուսակում 1-5 թվագրված ԿՄԿ-ների պահպանումը և շահագործումը իրականացնի Լավագույն արդյունաբերական պրակտիկայի համաձայն:

- (2) Մաքրման կայանի վատթար տեխնիկական վիճակի պատճառով Աէրացիա կեղտաջրերի մաքրման կայանի (ԱԿՄԿ) կողմից տրամադրվող ծառայությունները սահմանափակվում են կեղտաջրերի նախնական մեխանիկական մաքրմամբ: Մասնավորապես, այդ ծառայությունները ներառում են հետևյալը.

1. Կեղտաջրերի ընդունում,
2. Խոշոր աղբի առանձնացում,
3. Ավազորսիչների միջոցով տիղմի առանձնացում,
4. Էկոլոգիական տեսանկյունից ընդունելի կերպով ավազի և թափոնների հեռացում:

Կողմերն ընդունում են այն փաստը, որ նախնական մեխանիկական մաքրումը չի կարող զգալիորեն ազդել ԱԿՄԿ-ից դուրս եկող կեղտաջրերի որակի վրա:

- (3) Եթե Վարձակալության Ժամկետի ընթացքում Վարձատուն ԱԿՄԿ գործունեության բարելավման նպատակով որևէ ներդրում կատարի, ապա Վարձակալը պարտավոր է համագործակցել Վարձատուի հետ նշված ներդրումների իրականացմանն օժանդակելու ուղղությամբ: Եթե կատարված ներդրումների արդյունքում նախատեսվում է, որ Վարձակալն որևէ լրացուցիչ ծառայություններ տրամադրի, նշված ներդրումների իրականացումից հետո Վարձատուն և Վարձակալը պարտավոր են համաձայնության գալ լրացուցիչ ծառայությունների մատուցման պայմանների վերաբերյալ՝ Հավելված 2-ի 12 կետի համաձայն: Մինչև նման համաձայնության ձեռք բերումը՝ Վարձակալը պարտավոր չէ ԿՄԿ շահագործման արդյունքում սույն Հավելված 2-ի 11-րդ կետում ներկայացված ծառայության մակարդակներից կամ ծավալներից տարբերվող ծառայություններ մատուցել:
- (4) Վարձակալը պարտավորվում է պատասխանատվություն ստանձնել Աերացիա կեղտաջրերի մաքրման կայանի համար և իրականացնել հետևյալ միջոցառումներն ու աշխատանքները.
- (ա) ապահովել կեղտաջրերի հեռացման ցանցի (ԿՀՑ) միջոցով Բաժանորդներից ստացված և ԱԿՄԿ հասցված կեղտաջրերի մեխանիկական նախնական մաքրումը ԱԿՄԿ-ում,
  - (բ) Ժամկետի ընթացքում ապահովել ԱԿՄԿ-ում նախնական մեխանիկական մաքրումն իրականացնելու համար անհրաժեշտ Շահագործման և Պահպանման անձնակազմի առկայությունը, ինչպես նաև ապահովել աշխատակիցների այնպիսի ուսուցում, որն անհրաժեշտ է վերոհիշյալ պարտականություններն ապահով, արդյունավետ և Կիրառվող օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու համար,
  - (գ) ներհոսող կեղտաջրերի որակի մոնիտորինգի իրականացման նպատակով անցկացնել Ժամանակացույց 1-ում նկարագրված տեստավորման ծրագիր,
  - (դ) ներհոսող կեղտաջրերի ծավալների որոշման նպատակով տեղադրել, գործարկել և պահպանել չափիչ սարքեր և վարել գրառումներ, ինչպես նաև կանոնավոր կերպով կատարել նշված սարքերի ճշգրտում՝ համապատասխան պարամետրերի շրջանակներում դրանց ճիշտ աշխատանքն ապահովելու համար,
  - (ե) գործել Կիրառվող օրենսդրության համաձայն և հետևել, որ իր վերահսկողության տակ գտնվող ամբողջ աշխատակազմը՝ ներառյալ պահպանման և շահագործման աշխատակազմն ու իր Ենթակապալառուները նույնպես գործեն Կիրառվող օրենսդրության համաձայն, և պատասխանատվություն կրել այն վնասների, տույժերի և այլ պարտավորությունների համար, որոնք ծագում են Կիրառվող օրենսդրության խախտման արդյունքում;
  - (զ) տեղեկացնել Վարձատուին այն դեպքերի մասին, որոնց ժամանակ Վարձակալի կարծիքով ներհոսող կեղտաջրերի որակի նախատեսված չափանիշներին չհամապատասխանելու հետևանքով առողջությանը կամ անվտանգությանը լուրջ վտանգներ կարող են սպառնալ կամ էլ Վթարի

պատճառ դառնալ, որի դեպքում Վարձակալն անմիջապես պետք է տեխնիկական և ֆիզիկական հնարավորության սահմաններում էվակուացնի, տեղափոխի և ազատվի չափանիշներին չհամապատասխանող կեղտաջրից Վարձատուի կողմից այդ նպատակով սահմանված վայրում,

- (ե) նախնական մեխանիկական մաքրման վայրն աղբից զերծ և խելամիտ սահմաններում մաքուր և ներկայանալի վիճակում պահպանել և առաջացող թափոններից և աղբից ազատվել Կիրառվող օրենսդրությամբ սահմանված կարգով: Վարձակալը պատասխանատու է այն վտանգավոր նյութերի մշակման, վերացման կամ դրանցից ազատման համար, որոնք առաջանում են, բերվում կամ թափվում ԿՄԿ տարածք Ենթակապալառուների կամ նրանց աշխատակիցների կամ գործակալների կողմից,
- (ը) ապահովել բոլոր այն քիմիկատների, սպառման և այլ նյութերի, պահեստամասերի ու փոխարինող մասերի առկայությունը, որոնք անհրաժեշտ են ԿՄԿ նախնական մեխանիկական մաքրման աշխատանքների շահագործումը, պահպանումն ու վերականգնումն իրականացնելու համար՝ ներառյալ վառելիք, քսանյութեր և պահեստամասեր,
- (թ) պատասխանատվություն կրել ԱԿՄԿ աշխատակիցների անվտանգության համար,
- (ժ) տեղյակ պահել Վարձատուին այն դեպքերի մասին, որոնց արդյունքում Գույքի շահագործման ընթացքում Վարձակալի կողմից ձեռնարկված կամ առաջարկվող միջոցառումներից որևէ մեկը կարող է վտանգ ներկայացնել ԿՄԿ համար կամ որևէ վնաս հասցնել դրան,
- (ժա) սահմանված կարգով ազատվել նախնական մեխանիկական մաքրման արդյունքում առաջացած ավազից և աղբից:

(5) Ներհոսող կեղտաջրերի որակի մոնիտորինգ

- (ա) Պայմանագրի գործողության ընթացքում Վարձակալը շարունակաբար պարտավոր է կատարել ԿՄԿ մտնող կեղտաջրերի pH և հաղորդունակության ցուցանիշների չափումներ՝ դրանց կազմում հնարավոր փոփոխությունները հայտնաբերելու համար: Այդ չափումները պետք է գրանցվեն և պահվեն Վարձակալի պահոցներում:
- (բ) Ներհոսող կեղտաջրերի նմուշներն ավտոմատ կերպով վերցնելու համար ԿՄԿ պետք է ապահովված լինի ավտոմատ կերպով նմուշ վերցնող մեկ սարքով: Բաղադրյալ նմուշները պետք է պահվեն տարաներում և ծառայեն որպես ներհոսող կեղտաջրերի մոնիտորինգի անցկացման հիմք:
- (գ) Սահմանված կարգի համաձայն ներհոսող կեղտաջրերի նմուշների պարբերական տեստերը պետք է իրականացվեն Ժամանակացույց 1-ում բերված հաճախականությամբ:



(դ) Վարձակալը պարտավոր է պահպանել յուրաքանչյուր թեստի արդյունքները և կիսամյակային հաճախականությամբ այդ գրանցումների մեկ օրինակ ներկայացնել Վարձատուին:

## Ներհոսող կեղտաջրերի թեստեր (Ժամանակացույց 1)

Պարամետր	Առաջարկվող չափող սարքավորումներ	Առաջարկվող վերլուծության մեթոդ	Թեստի հաճախականություն  Ներհոսող կեղտաջրեր
ՔԹՊ	Կյուվետ փորձարկման կոմպլեկտ/Ֆոտոմետր	SM 5220D	շաբաթական
ԿԶՊ <sub>5</sub>	Մանոմետրիկ չափում	SM 5210B	շաբաթական
Կախյալ մասնիկներ	Ֆիլտրացիոն սարքավորում	SM 2540D	շաբաթական
NH <sub>4</sub> -N	Կյուվետ փորձարկման կոմպլեկտ/Ֆոտոմետր	SM 4500NH <sub>4+</sub> /D	շաբաթական
N <sub>ընդամենը</sub>	Կյուվետ փորձարկման կոմպլեկտ/Ֆոտոմետր	SM 4500N <sub>org</sub> C/ SM 4500NH <sub>3</sub> -H	շաբաթական
PO <sub>4</sub> -P	Կյուվետ փորձարկման կոմպլեկտ/Ֆոտոմետր	SM 4500P-B	շաբաթական
P <sub>ընդամենը</sub>	Կյուվետ փորձարկման կոմպլեկտ/Ֆոտոմետր	SM 4500P-E	շաբաթական
pH միավոր	Ունիվերսալ չափիչ սարք	SM 4500-H+B	օրական
TDS	Ունիվերսալ չափիչ սարք	SM 2540C	օրական
Յուղանյութեր	Հեռացնող/Չորացնող սարք/յուղանյութերի պարունակությունը որոշող սարք	SM 5520B	շաբաթական
Ընդամենը սուլֆատներ	Կյուվետ փորձարկման կոմպլեկտ/Ֆոտոմետր	SM 4500SO <sub>4</sub> -E	շաբաթական
Սուլֆիդ	Կյուվետ փորձարկման կոմպլեկտ/Ֆոտոմետր	SM 4500S2-AD	շաբաթական
Քլորիդներ	Կյուվետ փորձարկման կոմպլեկտ/Ֆոտոմետր	SM 4500Cl-E	շաբաթական

## 12. Ծառայությունների շրջանակի փոփոխություն

(1) Փոփոխությունների վերաբերյալ առաջարկի ներկայացում

(ա) Սույն Հավելվածի 12.(2)(ե) և 12.(2)(է) կետերի համաձայն՝ Վարձատուն իրավունք ունի առաջարկել և հետագայում պահանջել, որ Վարձակալը Պայմանագրի իրականացման ընթացքում ժամանակ առ ժամանակ Ծառայություններին առնչվող փոփոխություններ, ձևափոխում, լրացումներ կամ կրճատումներ (այսուհետ՝ Փոփոխություն) կատարի պայմանով, որ այդ Փոփոխությունը դուրս չգա Ծառայությունների ընդհանուր շրջանակներից, չենթադրի դրանց չվերաբերող աշխատանք և տեխնիկական առումով իրագործելի լինի՝ հաշվի առնելով Ծառայությունների զարգացման աստիճանը և Փոփոխությունների տեխնիկական համատեղելիությունը Պայմանագրով նախատեսված Ծառայությունների հետ:

- (բ) Պայմանագրի կատարման ընթացքում Վարձակալը ժամանակ առ ժամանակ կարող է առաջարկել Վարձատուին որոշակի Փոփոխություններ, որոնք Վարձակալի կարծիքով անհրաժեշտ են կամ ցանկալի՝ Ծառայությունների որակը, արդյունավետությունը կամ անվտանգությունը բարելավելու համար: Վարձատուն կարող է իր հայեցողությամբ ընդունել կամ մերժել Վարձակալի կողմից առաջարկվող ցանկացած Փոփոխություն, սակայն պարտավոր է ընդունել Վարձակալի կողմից առաջարկված այն Փոփոխությունները, որոնք ապահովում են Ծառայությունների անվտանգությունը:
- (գ) Չնայած սույն Հավելվածի 12. (1)(ա) և 12.(1)(բ) կետերի դրույթներին՝ այն փոփոխությունները, որոնք պայմանավորված են Վարձակալի կողմից սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարմամբ, չեն կարող համարվել Փոփոխություն և չեն կարող բերել Սակագնի, որևէ ժամանակացույցի կամ ժամկետի ճշգրտման:

(2) Վարձատուի կողմից առաջարկվող փոփոխություններ

(ա) Վարձատուի կողմից սույն Հավելվածի 12.(1)1 կետի համաձայն Փոփոխության նախաձեռնման դեպքում Վարձատուն պարտավոր է Վարձակալին ուղարկել Փոփոխության առաջարկի ներկայացման հայտ՝ Վարձակալին խնդրելով հնարավորինս սեղմ ժամկետում պատրաստել և Վարձատուին ներկայացնել Փոփոխության առաջարկ, որը պետք է ներառի հետևյալը.

- (i) Փոփոխության համառոտ նկարագրությունը;
- (ii) Փոփոխության ծախսերի նախահաշիվը;
- (iii) Պայմանագրի այլ պայմանների վրա դրա հնարավոր ազդեցության նկարագրություն:

(բ) Մինչև Փոփոխության առաջարկի նախապատրաստումն ու ներկայացումը Վարձակալը պարտավոր է Վարձատուին ներկայացնել Փոփոխության առաջարկի ծախսերի նախահաշիվ, ինչը հանդիսանում է Փոփոխության առաջարկի նախապատրաստման և ներկայացման ծախսերի գնահատում:

Վարձակալի Փոփոխության առաջարկի ծախսերի նախահաշիվն ստանալուց հետո Վարձատուն պարտավոր է կատարել ստորև բերված գործողություններից որևէ մեկը.

- (i) Ընդունել Վարձակալի հաշվարկները և հանձնարարել նրան շարունակել Փոփոխության առաջարկի նախապատրաստման աշխատանքները;
- (ii) Փոփոխության առաջարկի ծախսերի նախահաշիվի որևէ մի կետի անընդունելի լինելու դեպքում Վարձատուն կարող է խնդրել Վարձակալին վերանայել իր հաշվարկը;
- (iii) Տեղեկացնել Վարձակալին այն մասին, որ Վարձատուն մտադրված է հրաժարվել տվյալ Փոփոխության իրականացումից:

(գ) Սույն Հավելվածի 12(2) (բ) (1) կետով նախատեսված կարգով Վարձատուի կողմից հավանություն ստանալուց հետո Վարձակալը պարտավոր է

շարունակել Փոփոխության առաջարկի նախապատրաստման աշխատանքները՝ սույն Հավելվածի 12.(2)(ա) կետի պահանջներին համապատասխան:

(դ) Փոփոխության իրականացման գինը հնարավորության սահմաններում պետք է հաշվարկվի Փոփոխության իրականացման ծախսերին որոշակի ողջամիտ շահույթ գումարելով: Եթե Կողմերը համաձայնվել են, որ Փոփոխության իրականացման գինը պետք է փոխհատուցվի Սակագների հաշվին, նման Փոփոխությունը պետք է կատարվի ՀԾԿ ընթացակարգերի և որոշման համաձայն:

(ե) Եթե Փոփոխության առաջարկի նախապատրաստումից առաջ կամ դրա ընթացքում պարզ է դառնում, որ տվյալ Փոփոխության և Վարձակալի համար սույն Հավելվածի 12-րդ կետի համաձայն արդեն պարտավորեցնող դարձած այլ Փոփոխությունների առաջարկների արդյունքում ակնկալվում է Վարձակալի ծախսերի գումարային ավելացում կամ կրճատում ավելի քան տասնհինգ (15) տոկոսով, ապա Վարձակալը կարող է այդ առնչությամբ գրավոր առարկություն ներկայացնել մինչև վերը նշված կարգով Փոփոխության առաջարկի ներկայացումը: Եթե Վարձատուն ընդունում է Վարձակալի առարկությունը, ապա Վարձատուն պարտավոր է հետ կանչել իր առաջարկած Փոփոխությունը և այդ մասին գրավոր տեղեկացնել Վարձակալին:

Եթե Վարձակալը տվյալ Փոփոխության վերաբերյալ վերոհիշյալ կարգով չի ներկայացնում որևէ առարկություն, ապա դա ոչ մի ձևով չի ազդում Վարձակալի իրավունքների վրա՝ հետագայում այլ առարկություններ ներկայացնելու նոր Փոփոխությունների կամ Փոփոխության Հրահանգների վերաբերյալ, կամ էլ հաշվի առնելու տվյալ Փոփոխության ազդեցությունը Վարձակալի ծախսերի տոկոսային ավելացման կամ կրճատման առնչությամբ հետագա առարկություններում:

(զ) Փոփոխության առաջարկը ստանալուց հետո Վարձատուն և Վարձակալը պարտավոր են գալ երկկողմանի համաձայնության՝ դրանում ներառված բոլոր հարցերի վերաբերյալ: Նման պայմանավորվածության ձեռքբերումից տասնչորս (14) օրվա ընթացքում Վարձատուն պարտավոր է Վարձակալին Փոփոխության հրահանգ ներկայացնել այն դեպքում, եթե մտադիր է շարունակել տվյալ Փոփոխության իրականացման գործընթացը:

Եթե Վարձատուին չի հաջողվում որևէ որոշում կայացնել տասնչորս (14) օրվա ընթացքում, ապա նա պետք է Վարձակալին տեղյակ պահի այդ մասին որոշման ընդունման հստակ ժամկետի վերաբերյալ:

Եթե Վարձատուն որոշում է որևէ պատճառով դադարեցնել Փոփոխության իրականացման գործընթացը, նա վերոհիշյալ տասնչորս (14) օրվա ընթացքում պարտավոր է այդ մասին տեղեկացնել Վարձակալին: Այդ դեպքում «Փոփոխության առաջարկի» նախապատրաստման ընթացքում Վարձակալի կրած բոլոր ողջամիտ ծախսերը ենթակա են կրճատման Վարձակալության վճարի հաջորդ վճարման գումարից պայմանով, որ նշված

նախապատրաստման ծախսերը չեն գերազանցում այն գումարը, որը Վարձակալը ներկայացրել էր սույն Հավելվածի 12.(2)(բ) կետի համաձայն տրամադրված Փոփոխության առաջարկի ծախսերի նախահաշվի մեջ:

- (է) Եթե Վարձակալին ու Վարձատուին չի հաջողվում գալ համաձայնության Փոփոխության գնի կամ Փոփոխության առաջարկի որևէ այլ հարցի վերաբերյալ, Վարձատուն կարող է հանձնարարել Վարձակալին շարունակել Փոփոխության նախապատրաստման գործընթացը՝ ներկայացնելով նրան Հետագայում համաձայնեցման ենթակա փոփոխության հրահանգ:

Հետագայում համաձայնեցման ենթակա փոփոխության հրահանգ ստանալուց հետո Վարձակալը պարտավոր է անմիջապես սկսել Հրահանգում նշված Փոփոխությունների իրականացումը: Հետագայում Կողմերը պարտավոր են փորձել համաձայնության գալ Փոփոխության առաջարկի չլուծված խնդիրների վերաբերյալ:

Եթե Կողմերին չի հաջողվում համաձայնության գալ Հետագայում համաձայնեցման ենթակա Փոփոխության հրահանգի ներկայացման օրվանից սկսած վաթսուն (60) օրվա ընթացքում, ապա հարցը պետք է լուծվի սույն Պայմանագրի ԸՊ Հոդված 12-ով սահմանված կարգով:

(3) Վարձակալի կողմից առաջարկվող փոփոխություններ

- (ա) Սույն Հավելվածի 12.(1)(բ) կետի համաձայն Վարձակալի կողմից Փոփոխության նախաձեռնման դեպքում Վարձակալը պարտավոր է Վարձատուին գրավոր կերպով ներկայացնել Փոփոխության առաջարկի հայտ, որը պետք է ներառի առաջարկվող Փոփոխության պատճառները և սույն Հավելվածի 12(2)(ա) կետում բերված տեղեկությունները: Եթե Կողմերը համաձայնվել են, որ Փոփոխության իրականացման գինը պետք է փոխհատուցվի Սակագների հաշվին, նման Փոփոխությունը պետք է կատարվի ՀԾԿ ընթացակարգերի և որոշման համաձայն:

Փոփոխության առաջարկի հայտը ստանալուց հետո Կողմերը պարտավոր են հետևել սույն Հավելվածի 12.(2)(գ) և 12(2)(է) կետերով նախատեսված ընթացակարգերին: Այն դեպքում, եթե Վարձատուն որոշում է չշարունակել գործընթացը, ապա Վարձակալն իրավունք չունի Փոփոխության առաջարկի հայտի պատրաստման հետ կապված ծախսերի փոխհատուցում պահանջել:

### ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- (1) Կողմերն ընդունում են, որ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի Գույքի առկա նկարագրությունը կարող է թերի կամ ոչ ճշգրիտ լինել, և որ սույն Պայմանագրի նպատակը մինչև Մեկնարկային օրն Ընկերության կողմից օգտագործվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ամբողջ Գույքի ներառումն է:
- (2) Վարձակալը պետք է իրականացնի Հավելված 3-ում նշված Գույքի լրացուցիչ տեխնիկական աուդիտ, որը կսահմանի յուրաքանչյուր գույքի բնույթը, քանակը, տեխնիկական և շահագործման կարգավիճակը:
- Սույն տեխնիկական աուդիտի արդյունքները պետք է ներկայացվեն ԱՏԱ-ին և ուսումնասիրվեն ԱՏԱ-ի կողմից: Անհրաժեշտության դեպքում, Հավելված 3-ի Գույքի ցանկը կփոփոխվի:
- (3) Գույքի մեջ է մտնում նաև Պայմանագրի Ժամկետի ընթացքում Սպասարկման տարածքում կառուցված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի այն լրացուցիչ Գույքը, որը, համաձայն ԸՊ 5-րդ Հոդվածի, փոխանցվել է Վարձակալին:

### Գույքի ցանկ

#### 1. Ջրի արտադրության օբյեկտներ

##### 1.Ա Ջրի արտադրության օբյեկտներ. "Երևան Ջուր" ՓԲԸ-ի սպասարկման տարածք (առ՝ 31.12.2015թ.)

No.	Ջրաղբյուրի անվանումը	Տեղեկատվություն պաշարների վերաբերյալ	Ջրօգտագործման թույլտվություն լ/վ	Ջրատարների քանակ
1	Գառնի	ըստ Ա կարգի՝ 1360լ/վ, Բ կարգի 419.5լ/վ, C1 կարգի-287.5լ/վ(համաձայն ՕՀՊԳ 21.07.2009, N223 արձ.)	1 340,0	1
2	Արարատյան III և IV (Գայ-Հայկաշենի հանքավայր)	ըստ Ա կարգի՝ 5063լ/վ(համաձ. ՏՊՀ 24.04.1985թ, N 9475 արձ.)	1 500,0	5
3	Ապարան	Ըստ աղբյուրների. Բ կարգի՝ 763լ/վ, ըստ հորատանցքերի. Բ կարգի՝246լ/վ (ըստ ՊՊՀ 21.08.73թ.N№7071 արձանագրության)	1 300,0	1
4	Կաթնաղբյուր	ըստ աղբյուրների. Ա կարգի՝ 1590լ/վ, ըստ հորատանցքերի. Ա կարգի՝ 380լ/վ, C1 կարգի՝ 170լ/վ (ըստ 1969, 1974 N 5617, 6274, 7224 ՊՊՀ արձ.)	2 710,0	3
5	Արզական-Գյումուշ	պաշարները հաստատված չեն	2 350,0	3

No.	Ջրաղբյուրի անվանումը	Տեղեկատվություն պաշարների վերաբերյալ	Ջրօգտագործման թույլտվություն լ/վ	Ջրատարների քանակ
6	Շոր-Շոր	ըստ աղբյուրների տեղամասի՝ Ա կարգի՝ 699/վ, ըստ հորատանցքերի տեղամասի՝ Բ կարգի՝ 155/վ, C1 կարգի՝ 126/վ, C2 կարգի՝ 48 լ/վ (համաձ. ՏՊՀ 17.07.1992թ)	550,0	2
7	Ծարավաղբյուր	պաշարները հաստատված չեն	290,0	1
8	Ձորաղբյուր	ըստ աղբյուրների. Ա կարգի. 635/վ (համաձայն ՏՊՀ 05.11.1987թ. № 288 արձանագրության),	360,0	2
9	Արզնի	պաշարները հաստատված չեն	1 800,0	2
<b>Ընդամենը</b>			<b>12 200,0</b>	

**1.Բ Ջրի արտադրության օբյեկտներ. "Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի սպասարկման տարածք (առ՝ 31.12.2015թ.)**

No.	Ջրաղբյուրի անվանումը	Տեղեկատվություն պաշարների վերաբերյալ	Ջրօգտագործման թույլտվություն լ/վ	Ջրատարների քանակ
1	«Արամուսի» խ.հ		82,0	1
2	«Մաքրավան-2, 4» աղբ.		675,2	1
3	«Մաքրավան» խ.հ.		250,0	1
4	«Բուժական» աղբ.		45,0	1
5	«Սոնայի» (Ակունք) խ.հ			1
6	«Խաչատուրի» (Ակունք) խ.հ		23,0	1
7	«Վլեյի» (Ակունք) խ.հ			1
8	«Նուռնոս» աղբ.		130,0	3
9	«Ալափարս» աղբ.		84,0	4
10	«Գյումուշ» աղբ .		50,0	1
11	«Ֆանտան» խ.հ.			1
12	«Գութանասար» աղբ.		7,4	1
13	«Մաքրավան-2, 3» աղբ.		552,0	1
14	«Մաքրավան-2» աղբ.		110,0	3
15	«Թեղենիս» աղբ.		17,0	1
16	«Ուլաշիկ» ջրընդունիչ (Մարմարիկ գետ)		20,0	1
17	«Ջրաշեն» խ.հ.		30,0	1
18	«Շիրակամուտ» խ.հ.		32,0	1
19	«Ղազանչի» աղբ.		2,2	1
20	ք. Սպիտակ խ.հ.		40,0	1
21	«Չախկալի» աղբ		70,0	2
22	«Գյուլիդար» աղբ.		5,0	1
23	«Նովոսելցովո» խ.հ.		120,0	2
24	«Գետավան» աղբ.		200,0	2
25	«Կաթնաղբյուր» աղբ.		30,0	1
26	«Աքսյուտին» աղբ.		50,0	1
27	«Հովդարա» աղբ.		50,0	1
28	«Լոռի-Բերդ» աղբ.		350,0	1
29	«Ագարակ» աղբ		110,0	1

No.	Ջրաղբյուրի անվանումը	Տեղեկատվություն պաշարների վերաբերյալ	Ջրօգտագործման թույլտվություն լ/վ	Ջրատարների քանակ
30	«Արտաշավան» աղբ.		130,0	1
31	«Կարբի» խ.հ.		100,0	1
32	«Կարբի» աղբ.		40,0	1
33	«Արտակ» աղբ.		130,0	1
34	«Սաղմոսավան» աղբ.		90,0	1
35	«Ոսկեթասի» աղբ.		12,0	1
36	«Օրթաճիա» աղբ.		5,0	1
37	«Դերեկ» խ.հ.		35,0	2
38	«Գեղաձոր» աղբ.		16,0	1
39	«Եզնակ» աղբ.		110,0	3
40	«Յոթաղբյուր» աղբ.		100,0	1
41	«Կենտաղբյուրի» աղբ.		30,0	1
42	« N809 Կարմրաշեն» աղբ.		20,0	1
43	«Ջովասար» աղբ.		15,0	1
44	«Չլկաններ» աղբ.		70,0	1
Վարձակալը պարտավոր է նվազեցնել ՀԿՑ QS1<sub>գյուղ</sub>-ի տարեկան արժեքը 0.10 ժամով, յուրաքանչյուր գյուղական առանձնացված մատակարարման տարածքի (PRUR) համար, որտեղ ժամերով/օրով արտահայտված միջին տարեկան ջրամատակարարման տևողությունը, բացառությամբ Ելակետային արժեքների, ցածր է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ հաստատված նվազագույն ջրամատակարարման տևողությունից:

Պայմանագրային երրորդ (3) և Պայմանագրային տասնհինգերորդ (15) տարիների միջև ընկած ժամանակահատվածում  $PYER_{ij}$ ,  $PURB_{ij}$  և  $PRUR_{ij}$  առանձնացված մատակարարման տարածքների ժամերով արտահայտված միջին օրական ջրամատակարարման տևողությունը պետք է հաշվարկվի՝ հիմնվելով ճնշման լոգերների տվյալների վրա հետևյալ կերպ.

$$PURB_{ij} = PRUR_{ij} = PYER_{ij} = \frac{\sum_{q=1}^w C_q (p_q)}{w \times C_{ij}} \times 24 \text{ hours}$$

որտեղ՝

- $w$  -ն ճնշման լոգերի օրական չափումների քանակն է յուրաքանչյուր լոգերի համար
- $p_q$  -ն չափված ճնշումն է
- $C_q(p_q)$  -ն  $p_q$  չափված ճնշման ջրով մատակարարված Բաժանորդների թիվն է

Բացակայող կամ չչափված տվյալները կդիտարկվեն որպես չմատակարարված ջուր:

Պայմանագրային առաջին (1) և Պայմանագրային երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում  $PYER_{ij}$ ,  $PURB_{ij}$  և  $PRUR_{ij}$  առանձնացված մատակարարման տարածքների ժամերով արտահայտված օրական ջրամատակարարման տևողությունը, որտեղ տեղադրված են ճնշման լոգերներ, պետք է հաշվարկվի՝ հիմնվելով ճնշման լոգերների տվյալների վրա, ինչպես նկարագրված է Պայմանագրային երրորդ(3) և Պայմանագրային տասնհինգերորդ (15) տարիների համար:

Առանձնացված մատակարարման տարածքների ջրամատակարարման տևողությունը, որտեղ ճնշման լոգերներ տեղադրված չեն, պետք է հաշվարկվի ըստ պաշտոնապես հայտարարված/հրապարակված ջրամատակարարման ժամանակացույցի: Պաշտոնապես հայտարարված/հրապարակված ջրամատակարարման ժամանակացույցից ցանկացած շեղում պետք է հստակորեն փաստագրվի Վարձակալի կողմից, և միայն այդպես պետք է կիրառվի հաշվարկման մեջ: Վարձակալի կողմից հաշվարկման մեջ օգտագործված ջրամատակարարման ժամանակահատվածը պետք է հիմնավորված լինի՝

- ջրամատակարարման համակարգի հիդրավլիկ կրիտիկական կետերի

**ՀԿՑ QS1՝ Ջրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում**

- պարբերական և համակարգված մոնիտորինգի ճնշման չափումներով,
- պոմպակայանների շահագործման ժամերը (հաշվիչի տվյալները),
- աուդիտի ընթացքում տեղանքների ստուգումներով,
- այցելություն կատարելով մատակարարման տարածքում պատահականության կարգով ընտրված Բաժանորդներին,
- համեմատելով առանձնացված մատակարարման տարածքի ծավալի ներհոսքի և արտահոսքի չափումները (որտեղ գոյություն ունեն ծավալի ջրաչափեր) մատակարարման տարածքի ակնկալվող ջրի պահանջի հետ:

**Պահանջներ՝**

1) Պայմանագրային առաջին տարում Վարձակալը պարտավոր է Բազիսային տարվա տվյալների հաշվետվության հետ միասին պատրաստել և տրամադրել Սպասարկման տարածքում բոլոր առանձնացված մատակարարման տարածքների (գոտիների) ցուցակը: Այս ցուցակը պետք է ուսումնասիրվի և հաստատվի Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից Բազիսային տարվա տվյալների հաշվետվության աուդիտի շրջանակներում՝ համաձայն ԸՊ կետ 6.8-ի:

2) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում, հիմնվելով ճնշման լոգերների չափումների վրա, Վարձակալը պետք է մշակի և կիրառի ճնշման մոնիտորինգի պլան և ռազմավարություն: Լոգերները պետք է ներառեն Վարձակալի ամբողջ սպասարկման տարածքը և պետք է հուսալիորեն և ճշգրիտ չափեն ճնշումը սպասարկման ողջ տարածքում: Այս պլանը և ռազմավարությունը, որոնց արդյունքում ի հայտ կգան լոգերների քանակը, գտնվելու վայրը, տեսակը, չափումների հաճախականությունը և տվյալների կառավարումը, պետք է վերանայվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից, ով պարտավոր է առաջարկություններ անել առաջարկված պլանի բարելավման համար է, եթե այդպիսիք կան:

3) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում, յուրաքանչյուր տեղադրված ճնշման լոգերի համար, Վարձակալը պետք է կախվածություն հաստատի չափված ճնշման և մատակարարված Բաժանորդների թվի միջև ( $C_q - p_q$ ), որը պետք է ստուգվի և արժանանա Անկախ Տեխնիկական Աուդիտորի հավանությանը:

4) Պայմանագրային առաջին (1), երկրորդ (2) և երրորդ (3) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է համակարգչային ծրագրով նախապատրաստի հիդրավլիկ մոդելներ սպասարկման տարածքի համար, որոնք համատեղելի են առկա ջրամատակարարման ցանցի GIS -ի հետ: Հիդրավլիկ մոդելները պետք է ներառեն Վարձակալի սպասարկման տարածքի բոլոր համապատասխան ակտիվները, և պետք է հիմնված լինեն GIS -ում մուտքագրված գրառումների վրա:

5) Պայմանագրային առաջին (1), երկրորդ (2) և երրորդ (3) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է նախապատրաստի ջրամատակարարման ցանցի բոլոր համապատասխան ակտիվների աշխարհագրական GIS տվյալների բազան:



**ՀԿՑ QS1՝ Ջրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում**

**Սահմանումներ՝**

Բաժանորդների քանակ (C) - առանձնացված մատակարարման տարածքների Բաժանորդների քանակը պետք է հաշվարկված լինի ըստ Բաժանորդների տվյալների բազայի: Եթե Բաժանորդների տվյալների բազայի տվյալները համարվեն ոչ ճշգրիտ և /կամ անհուսալի, ապա Վարձակալը պետք է հաշվարկի և հիմնավորի դրանք լավագույն հնարավոր տարբերակներով:

Չափումների միջև ընդմիջումները – Ճնշման լոգերներով չափումների միջև ընդմիջումները պետք է լինեն մեկ ժամից ոչ ավելի:

**Բացառություններ՝** Երևան քաղաքում Պայմանագրային մեկ (1) տարվա ընթացքում յուրաքանչյուր լոգերի կողմից չհասնող չափումների առավելագույնը 5%-ը և այլ քաղաքային ու գյուղական տարածքներում Պայմանագրային մեկ (1) տարվա ընթացքում յուրաքանչյուր լոգերի կողմից չհասնող չափումների առավելագույնը 10%-ը կարելի է բացառել հաշվարկումից՝ համարելով, որ այդ ժամանակը անհրաժեշտ է եղել համապատասխան ճնշման լոգերի սպասարկման համար:

Մեծածախ ջրամատակարարման ծառայություն ստացող գյուղերը չեն ներառվում սույն ՀԿՑ-ի հաշվարկում:

**Ելակետային արժեքներ (ԵԱ)**՝ Վարձակալը պետք է սահմանի ՀԿՑ QS1<sub>Երևան</sub> - ի, ՀԿՑ QS1<sub>քաղաք</sub> - ի և ՀԿՑ QS1<sub>գյուղ</sub> - ի ելակետային արժեքները՝ հիմք ընդունելով Բազիսային տարվա հասանելի տվյալները և տեղեկատվությունը:

Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ստուգի, հաստատի և, անհրաժեշտության դեպքում, համապատասխանեցնի ելակետային արժեքները: Ելակետային արժեքները պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:

**Նորմալ Գործող Ստանդարտ (ՆԳՍ) և Վատ Կատարողական մակարդակ (ՎԿՄ):** ՆԳՍ-ն կախված է համապատասխան ելակետային արժեքներից (ԵԱ) և սահմանվում է առանձին (i) Երևան քաղաքի, (ii) այլ քաղաքային բնակավայրերի և (iii) գյուղական տարածքների համար, որոնք գտնվում են Վարձակալի սպասարկման տարածքում: Առանձին պայմանագրային տարվա ՎԿՄ-ը կախված է տվյալ պայմանագրային տարվա ՆԳՍ-ից, բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից: ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը պետք է կլորացվեն մեկ տասնորդականի մասում: Վարձակալը պետք է ստանա ՀԿՑ QS1<sub>Երևան</sub> - ի, ՀԿՑ QS1<sub>քաղաք</sub> - ի և ՀԿՑ QS1<sub>գյուղ</sub> - ի ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը կոնկրետ Պայմանագրային տարվա համար (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) հետևյալ կերպ՝

**ՀԿՑ QՏ1՝ Ջրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում**

**1) ՀԿՑ QՏ1<sub>Երևան</sub> - ի ԼԳՍ-ը, ՎԿՄ-ը և ԳԿՄ-ը**

	ՊՏ 1	ՊՏ 2	ՊՏ 3	ՊՏ 4	ՊՏ 5	ՊՏ 6	ՊՏ 7	ՊՏ 8
<b>ՎԿՄ</b>	-	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ
<b>ԼԳՍ</b>	-	1.01x ԵԱ	1.02x ԵԱ	1.03x ԵԱ	1.04x ԵԱ	1.05x ԵԱ	1.06x ԵԱ	1.07x ԵԱ
	<b>ՊՏ 9</b>	<b>ՊՏ 10</b>	<b>ՊՏ 11</b>	<b>ՊՏ 12</b>	<b>ՊՏ 13</b>	<b>ՊՏ 14</b>	<b>ՊՏ 15</b>	
<b>ՎԿՄ</b>	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	
<b>ԼԳՍ</b>	1.08x ԵԱ	1.09x ԵԱ	1.10x ԵԱ	1.11x ԵԱ	1.12x ԵԱ	1.13x ԵԱ	1.14x ԵԱ	

ՀԿՑ QՏ1<sub>Երևան</sub> - ի ԼԳՍ-ը սահմանվում է 23 ժամ/օր առավելագույն արժեքով

ՀԿՑ QՏ1<sub>Երևան</sub> - ի ՎԿՄ-ի նվազագույն արժեքը 20 ժամ/օր է

**2) ՀԿՑ QՏ1<sub>քաղաք</sub> - ի ԼԳՍ-ը, ՎԿՄ-ը և ԳԿՄ-ը**

	ՊՏ 1	ՊՏ 2	ՊՏ 3	ՊՏ 4	ՊՏ 5	ՊՏ 6	ՊՏ 7	ՊՏ 8
<b>ՎԿՄ</b>	-	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ
<b>ԼԳՍ</b>	-	1.04x ԵԱ	1.08x ԵԱ	1.12x ԵԱ	1.16x ԵԱ	1.20x ԵԱ	1.24x ԵԱ	1.28x ԵԱ
	<b>ՊՏ 9</b>	<b>ՊՏ 10</b>	<b>ՊՏ 11</b>	<b>ՊՏ 12</b>	<b>ՊՏ 13</b>	<b>ՊՏ 14</b>	<b>ՊՏ 15</b>	
<b>ՎԿՄ</b>	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	
<b>ԼԳՍ</b>	1.30x ԵԱ	1.32x ԵԱ	1.34x ԵԱ	1.36x ԵԱ	1.38x ԵԱ	1.40x ԵԱ	1.42x ԵԱ	

ՀԿՑ QՏ1<sub>քաղաք</sub> - ի ԼԳՍ-ը սահմանվում է 20 ժամ/օր առավելագույն արժեքով

**ՀԿՑ QՏ1<sub>գյուղ</sub> - ի ԼԳՍ-ը, ՎԿՄ-ը և ԳԿՄ-ը**

	ՊՏ 1	ՊՏ 2	ՊՏ 3	ՊՏ 4	ՊՏ 5	ՊՏ 6	ՊՏ 7	ՊՏ 8
<b>ՎԿՄ</b>	-	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ
<b>ԼԳՍ</b>	-	1.05x ԵԱ	1.10x ԵԱ	1.15x ԵԱ	1.20x ԵԱ	1.25x ԵԱ	1.30x ԵԱ	1.35x ԵԱ
	<b>ՊՏ 9</b>	<b>ՊՏ 10</b>	<b>ՊՏ 11</b>	<b>ՊՏ 12</b>	<b>ՊՏ 13</b>	<b>ՊՏ 14</b>	<b>ՊՏ 15</b>	
<b>ՎԿՄ</b>	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	0,90x ԼԳՍ	
<b>ԼԳՍ</b>	1.40x ԵԱ	1.42x ԵԱ	1.44x ԵԱ	1.46x ԵԱ	1.48x ԵԱ	1.50x ԵԱ	1.52x ԵԱ	

ՀԿՑ QՏ1<sub>գյուղ</sub> - ի ԼԳՍ-ը սահմանվում է 20 ժամ/օր առավելագույն արժեքով

**ՀԿՑ QS1՝ Ջրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում**

**Տուժանքներ՝** ՀԿՑ QS1<sub>Երևան</sub>-ը, ՀԿՑ QS1<sub>քաղաք</sub>-ը և ՀԿՑ QS1<sub>գյուղ</sub>-ը ենթակա են տուժանքների համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) ՆԳՍ-ից ավելի վատ տարեկան կատարողականի դեպքում: Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է առանձին հաշվարկի յուրաքանչյուր ՀԿՑ-ի տուժանքը՝ հիմք ընդունելով Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված ՀԿՑ արժեքները:

Դեպք 1: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) ՀԿՑ-ի ձեռք բերված կատարողականը հավասար էր, կամ ավելի վատ, քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$KPI_{QS1_{yerevan}} \leq WPL_{KPI_{QS1_{yerevan}}}$$

$$PEN_{KPI_{QS1_{yerevan}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{yerevan}}} \times Revenue$$

$$KPI_{QS1_{urban}} \leq WPL_{KPI_{QS1_{urban}}}$$

$$PEN_{KPI_{QS1_{urban}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{urban}}} \times Revenue$$

$$KPI_{QS1_{rural}} \leq WPL_{KPI_{QS1_{rural}}}$$

$$PEN_{KPI_{QS1_{rural}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{rural}}} \times Revenue$$

Եթե Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում Վարձակալին չի հաջողվում ներդնել ճնշման լոգերների վրա հիմնված ճնշման մոնիտորինգի համակարգ, ապա սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$PEN_{KPI_{QS1_{yerevan}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{yerevan}}} \times Revenue$$

$$PEN_{KPI_{QS1_{urban}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{urban}}} \times Revenue$$

$$PEN_{KPI_{QS1_{rural}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{rural}}} \times Revenue$$

Դեպք 2: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) համապատասխան ՀԿՑ-ով չափված ձեռք բերված կատարողականը գերազանցել էր վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), բայց ավելի վատ էր քան նորմալ գործող ստանդարտը (ՆԳՍ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել տուժանք (PEN), որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

**ՀԿՑ QS1՝ Ջրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում**

$$WPL_{KPI\ QS1\ yerevan} < KPI\ QS1\ yerevan < NOS_{KPI\ QS1\ yerevan}:$$

$$PEN_{KPI\ QS1\ yerevan} = 0.05 \times W_{KPI\ QS1\ yerevan} \times \frac{KPI\ QS1\ yerevan - NOS_{KPI\ QS1\ yerevan}}{WPL_{KPI\ QS1\ yerevan} - NOS_{KPI\ QS1\ yerevan}}$$

$$WPL_{KPI\ QS1\ urban} < KPI\ QS1\ urban < NOS_{KPI\ QS1\ urban}:$$

$$PEN_{KPI\ QS1\ urban} = 0.05 \times W_{KPI\ QS1\ urban} \times \frac{KPI\ QS1\ urban - NOS_{KPI\ QS1\ urban}}{WPL_{KPI\ QS1\ urban} - NOS_{KPI\ QS1\ urban}} \times Revenue$$

$$WPL_{KPI\ QS1\ rural} < KPI\ QS1\ rural < NOS_{KPI\ QS1\ rural}:$$

$$PEN_{KPI\ QS1\ rural} = 0.05 \times W_{KPI\ QS1\ rural} \times \frac{KPI\ QS1\ rural - NOS_{KPI\ QS1\ rural}}{WPL_{KPI\ QS1\ rural} - NOS_{KPI\ QS1\ rural}} \times Revenue$$

որտեղ՝

- Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց Վարձակալի կողմից գանձված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Հասույթը և հասույթները առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային տարվա ֆինանսական հաշվետվության զեկուցում:
- $W_{KPI\ QS1\ yerevan}$ ,  $W_{KPI\ QS1\ urban}$  և  $W_{KPI\ QS1\ rural}$  այս ՀԿՑ-ների կշիռներն են, որոնք հարաբերվում են սույն Պայմանագրին առնչվող այլ ՀԿՑ-ների հետ:  $W_{KPI\ QS1\ yerevan}$ ,  $W_{KPI\ QS1\ urban}$  և  $W_{KPI\ QS1\ rural}$  կշիռները սահմանվում են հետևյալ կերպ՝
  - $W_{KPI\ QS1\ yerevan} = 10\%$
  - $W_{KPI\ QS1\ urban} = 12.5\%$  և
  - $W_{KPI\ QS1\ rural} = 12.5\%$

**Հաշվետվություն՝** Վարձակալը պետք է զեկուցի այս ՀԿՑ-ները ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում:

Վարձակալը պետք է ճնշման լոգերների բեռնված տվյալները (հում տվյալները) եռամսյակային կտրվածքով ներկայացնի Վարձատուին: Եռամսյակային տվյալները չպետք է վերլուծվեն: Տվյալների վերլուծությունը և կշռված մատակարարման ժամերի հաշվարկը պետք է կատարվի միայն է համապատասխան Պայմանագրային տարվա ավարտին:

Ճնշման լոգերների եռամսյակային տվյալները պետք է ներկայացվեն Վարձատուին,

**ՀԿՑ QS1՝ Ջրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում**

ինչպես թղթային այնպես էլ էլեկտրոնային տարբերակով համակարգչային ծրագրի հետ միասին: Լոգերների թղթային ձևաչափը պետք է ներառի գրաֆիկներ, որտեղ ուղղահայաց առանցքը պետք է ունենա գրոյից մոտավորապես 20%-ով ավելի բարձր ճնշման ամպլիտուդ քան պահանջվող ջրի ճնշումն է: Հորիզոնական առանցքի մասշտաբը պետք է լինի այնպիսին, որ լանդշաֆտային ձևաչափով յուրաքանչյուրը A4 էջը պարունակի է մոտավորապես 10 օրվա ժամանակաշրջան: Վարձատուն և Անկախ Տեխնիկական Աուդիտորը կարող են վերանայել ճնշման լոգերների տվյալների ձևաչափը:

Ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում Վարձակալը պետք է զեկուցի ՀԿՑ արժեքները, ինչպես նաև համապատասխան հաշվարկի մանրամասն բացվածքի վերաբերյալ:

**Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝** Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները ջրամատակարարման շարունակականության ՀԿՑ QS1-ի առումով՝

- Վարձակալի կողմից նախապատրաստվող և իրականացվող ճնշման մոնիտորինգի պլանի վերանայում,
- անհրաժեշտության դեպքում՝ ճնշման մոնիտորինգի պլանի բարելավման առաջարկությունների տրամադրում,
- անհրաժեշտության դեպքում՝ Վարձակալի կողմից հաշվարկված ելակետային արժեքների ստուգում և վերահաշվարկում,
- անհրաժեշտության դեպքում՝ զեկուցված ՀԿՑ արժեքների տարեկան ստուգում և դրանց վերահաշվարկում,
- այդ ՀԿՑ-ներին առնչվող տուժանքների հաշվարկում,
- այդ ՀԿՑ-ներին վերաբերող Վարձակալի հաշվետվության գնահատում, և
- այդ ՀԿՑ-ներին վերաբերող Վարձակալի հաշվետվությանն առնչվող առաջարկությունների տրամադրում:

**Ֆինանսական Աուդիտորի ներգրավվածությունը՝** Պայմանագրի տևողության ընթացքում Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի և Վարձակալի Հասույթը ներկայացնի յուրաքանչյուր Պայմանագրային Տարվա տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվության մեջ:

(2) **ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը**

ՀԿՑ QS2-ի չափումը սահմանվում է 2014թ.-ի օգոստոսի 14-ի Ն883-Ն Կառավարության որոշման համաձայն: ՀԿՑ QS2-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-2-ում:

Աղյուսակ6-2՝ՀԿՑ QS2-ի հաշվարկման մեթոդաբանությունը (Մատակարարվող ջրի որակը)

<b>ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը</b>
<b>Վկայակոչում՝</b> IWA-QS18 և IBNET-15.3
<b>Նկարագիր՝</b> QS2 –ը պետք է պարզի կիրառելի ստանդարտին համապատասխանող ընտրված պարամետրերի համար իրականացված թեստերի տոկոսային հարաբերությունը Պայմանագրային տարվա ընթացքում անհրաժեշտ թվով թեստերի համեմատ:
<b>Նպատակ՝</b> Վարձակալը պետք է ապահովի, որ Սպառողներին մատակարարվող ջրի որակը համապատասխանի կիրառելի ստանդարտին, որը սակայն չի ազատում վարձակալին պահանջվող մոնիտորինգից և ջրի որակի հետ կապված այլ պարտականություններից, որոնք սահմանված են կառավարության, նախարարությունների կողմից և Հանրապետության Հայաստան օրենքներով:
<p><b>Հաշվարկման մեթոդը՝</b></p> $KPI\ QS2 = \frac{\sum_{i=1}^n \sum_{j=1}^m (T1_{ij} + T2_{ij} + T3_{ij} + T4_{ij})}{4 \times m \times n} \times 100 (\%)$ <p>որտեղ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• <math>n</math> –ը Պայմանագրային տարվա օրերի թիվն է, <math>m</math> –ը նմուշառման կետերի քանակն է</li> <li>• <math>\sum_{j=1}^m T1_{ij}</math> –ը նմուշների գումարն է պարամետրT1-ի (<b>Ջրածնային ցուցանիշ (pH)</b>) նկատմամբ <math>i</math> օրվա ընթացքում համաձայն գործող ստանդարտի:</li> <li>• <math>\sum_{j=1}^m T2_{ij}</math> –ը նմուշների գումարն է պարամետրT2-ի (<b>մնացորդային քլոր</b>) նկատմամբ <math>i</math> օրվա ընթացքում համաձայն գործող ստանդարտի:</li> <li>• <math>\sum_{j=1}^m T3_{ij}</math> –ը նմուշների գումարն է պարամետրT4-ի (<b>պղտորություն</b>) նկատմամբ <math>i</math> օրվա ընթացքում համաձայն գործող ստանդարտի:</li> <li>• <math>\sum_{j=1}^m T4_{ij}</math> –ը նմուշների գումարն է պարամետրT5-ի (<b>կոշտություն</b>) նկատմամբ <math>i</math> օրվա</li> </ul>

**ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը**

ընթացքում համաձայն գործող ստանդարտի:

ՀԿՑ արժեքը պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:

**Սահմանումներ՝**

Գործող ստանդարտը – Գործող Ստանդարտը Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող ջրի որակի ստանդարտն է կամ նորմը պայմանագրի ստորագրման օրվանից:

Նմուշառման կետերը -Վարձակալի կողմից մշակվող ջրի որակի մոնիտորինգի պլանի և ռազմավարության մեջ Վարձակալը պետք է առաջարկի օրական կտրվածքով նմուշառվող նմուշառման կետերի թիվը և տեղակայման վայրերը: Այդ վայրերը պետք է ներառեն առնվազն ջրամբարներ, էլեկտրահաղորդման լարեր, հասարակական ծորակներ և Բաժանորդի տարածքում տեղակայված ծորակներ: Վարձակալի առաջարկությունը պետք է ստուգվի և հաստատվի Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից:

Նմուշառման Հաճախականությունը – Վարձակալը պետք է նմուշառնի բոլոր նմուշառման կետերը օրական կտրվածքով: Վարձակալը պետք է փաստագրի նմուշները համապատասխան արձանագրություններում առնվազն նշելով՝

- նմուշառման օրը, ժամը, վայրը և
- Նմուշառմանը մասնակցած անձանց կազմը:

Այն նմուշները, որոնք չի հաջողվել վերցնել կհամարվեն անհամապատասխան բոլոր չորս (4) թեստավորման պարամետրերի նկատմամբ, այսինքն T1, T2, T3 և T4 պարամետրերի նկատմամբ:

Թեստավորման հաճախականությունը – Բոլոր չորս (4) թեստավորման պարամետրերը՝ T1, T2, T3 և T4, պետք է թեստավորվեն օրական կտրվածքով: Վարձակալը պետք է փաստագրի թեստավորման արդյունքները համապատասխան տեղեկամատյաններում՝ մատնանշելով առնվազն օրը, ժամը, թեստերի համապատասխան արդյունքները և սահմանային արժեքներին դրանց համապատասխանումը, ինչպես սահմանված է Գործող Ստանդարտում:

Վերցված նմուշներից ստացված պարամետրերը, որոնք վարձակալին չի հաջողվել վերլուծել, համարվում են անհամապատասխան:

**Բացառություններ՝** Նմուշները, որոնք Վարձակալին չի հաջողվել վերցնել նմուշառման կետերից եղանակային պայմանների կամ նմուշառման կետերի հասանելիությունը խոչընդոտող այլ արտաքին գործոնների պատճառով, պետք է բացառել: Վարձակալը պետք է հստակ փաստագրի այդ դեպքերը՝ առնվազն նշելով օրը և ամենօրյա նմուշառման պլանից շեղումների հիմնավորումը: Նման դեպքերում, Անկախ Տեխնիկական Աուդիտորը կուսումնասիրի այսպիսի բացառությունները և կհաստատի բացառման հիմնավորումը կամ բացառումը կհամարի անհամապատասխան՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորի վերանայման հիման վրա:

Պղտորության և կոշտության հետազոտությունների արդյունքները նմուշառման այն

**ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը**

կետերում, որտեղ նմուշառման պահին առկա մաքրման կայաններն ու շահագործման նպատակով վարձակալված աղբյուրներն ի վիճակի չեն համապատասխանել Գործող ստանդարտին չպետք է հաշվի առնվեն սույն ՀԿՑ-ի հաշվարկում:

**Պահանջներ՝**

1) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է մշակի և կիրառի ջրի որակի և համապատասխան նմուշառումների կետերի մոնիտորինգի պլան՝ QS2-ը հուսալիորեն չափելու համար: Ջրի որակի մոնիտորինգի պլանը պետք է վերանայվի Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից, ով պարտավոր է առաջարկություններ անել առաջարկված պլանի բարելավման համար է, եթե այդպիսիք կան:

2) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պարտավոր է բացահայտել դեֆիցիտները և ընդլայնել ջրի մաքրումը այնպիսի վայրերում, ինչպիսիք են աղբյուրները կամ ջրամբարները, որտեղ ներկայումս պահանջվող ջրի որակի համապատասխան ջրի մաքրման ոչ մի միջոց չկա՝ համաձայն Գործող Ստանդարտի QS2-ին առնչվող չորս (4) պարամետրերի:

3) Սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից, յուրաքանչյուր Պայմանագրային տարվա համար, բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից, Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է նմուշառման կետերում իրականացնի ջրի որակի ինքնուրույն հետազոտություն՝ QS2-ի հաշվարկման մեջ օգտագործվող չորս (4) ընտրված պարամետրերի համար:

**Ելակետային Արժեք (ԵԱ)՝ Չկա**

**Նորմալ Գործող Ստանդարտ (ՆԳՍ) և Վատ Կատարողական մակարդակ (ՎԿՄ)՝**

	<b>ՊՏ 1</b>	<b>ՊՏ 2</b>	<b>ՊՏ 3</b>	<b>ՊՏ 4</b>	<b>ՊՏ 5</b>	<b>ՊՏ 6</b>	<b>ՊՏ 7</b>	<b>ՊՏ 8</b>
<b>ՎԿՄ</b>	-	-	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%
<b>ՆԳՍ</b>	-	-	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%
	<b>ՊՏ 9</b>	<b>ՊՏ 10</b>	<b>ՊՏ 11</b>	<b>ՊՏ 12</b>	<b>ՊՏ 13</b>	<b>ՊՏ 14</b>	<b>ՊՏ 15</b>	
<b>ՎԿՄ</b>	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%	
<b>ՆԳՍ</b>	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%	



**ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը**

**Տուժանքներ՝** QS2 - ը ենթակա է տուժանքների համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) ՆԳՍ-ից ավելի վատ տարեկան կատարողականի դեպքում:

Եթե համապատասխան Պայմանագրային տարվա ընթացքում (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից կատարած ջրի որակի հետազոտության արդյունքները զգալիորեն տարբերվում են Վարձակալի կողմից տրամադրած արդյունքներից, Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է գնահատի QS2-ի տարեկան արժեքը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորի փորձաքննության և հետազոտության արդյունքների հիման վրա և, անհրաժեշտության դեպքում, ենթարկի պահանջվող տույժին:

Հիմնվելով Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված QS2 արժեքների վրա՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է հաշվարկի տուժանքը հետևյալ կերպ՝

Դեպք 1: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) QS2-ի ձեռք բերված կատարողականը հավասար էր, կամ ավելի վատ, քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$KPI_{QS2} \leq WPL_{KPI_{QS2}}:$$

$$PEN_{KPI_{QS2}} = 0.05 \times W_{KPI_{QS2}} \times \text{[Symbol]}$$

Եթե Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում Վարձակալին չի հաջողվում ներդնել ջրի որակի մոնիտորինգի համակարգ QS2-ի համար, ապա սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN), որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$PEN_{KPI_{QS2}} = 0.05 \times W_{KPI_{QS2} \text{ yerevan}} \times \text{[Symbol]}$$

Դեպք 2: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) QS2-ի ձեռք բերված կատարողականը ավելի լավ էր քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), բայց ավելի վատ էր քան նորմալ գործող ստանդարտը (ՆԳՍ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել տուժանք (PEN), որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$WPL_{KPI_{QS2}} < KPI_{QS2} < NOS_{KPI_{QS2}}:$$

**ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը**

$$PEN_{KPI\ QS2} = 0.05 \times W_{KPI\ QS2} \times \frac{KPI\ QS2 - NOS_{KPI\ QS2}}{WPL_{KPI\ QS2} - NOS_{KPI\ QS2}} \times 1000000\text{P}$$

որտեղ՝

- Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց Ջրամատակարարման ընկերության կողմից հաշվեգրված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Վարձակալի Հասույթը և հասույթները առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային տարվա ֆինանսական հաշվետվության զեկույցում:
- $W_{KPI\ QS2}$  այս ՀԿՑ-ների կշիռներն են, որոնք հարաբերվում են սույն Պայմանագրին առնչվող այլ ՀԿՑ-ների հետ:  $W_{KPI\ QS2}$  -ը հետևյալն է՝
  - $W_{KPI\ QS2} = 25\%$

**Հաշվետվություն՝** Վարձակալը պետք է զեկուցի QS2-ը Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում: Նա պետք է զեկուցի ՀԿՑ արժեքները, ինչպես նաև համապատասխան հաշվարկի մանրամասն բացվածքի վերաբերյալ:

**Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝** Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները QS2-ի առումով՝

- Վարձակալի կողմից նախապատրաստվող և իրականացվող ջրի որակի մոնիտորինգի պլանի վերանայում,
- անհրաժեշտության դեպքում՝ առաջարկված նմուշառման կետերի քանակի և տեղակայման վայրերի բարելավման առաջարկությունների տրամադրում,
- անհրաժեշտության դեպքում՝ Վարձակալի կողմից հաշվարկված ելակետային արժեքների ստուգում և վերահաշվարկում,
- ջրի որակի տարեկան գնում,
- անհրաժեշտության դեպքում՝ զեկուցված ՀԿՑ արժեքների տարեկան ստուգում և դրանց վերահաշվարկում,
- QS2-ին առնչվող տուժանքների հաշվարկում,
- QS2-ին վերաբերող Վարձակալի հաշվետվության գնահատում, և
- QS2-ին վերաբերող Վարձակալի հաշվետվությանն առնչվող առաջարկությունների տրամադրում:

**Ֆինանսական Աուդիտորի ներգրավվածությունը՝** Պայմանագրի տևողության ընթացքում Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի և Վարձակալի Հասույթը ներկայացնի յուրաքանչյուր Պայմանագրային Տարվա տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվության մեջ:

**(3) ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)**  
 ՀԿՑ CF1-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-3-ում:

Աղյուսակ 6-3՝ ՀԿՑ CF1-ի հաշվարկման մեթոդաբանությունը (Չհաշվառվող ջուր՝ ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)

<b>ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)</b>
<p><b>Վկայակոչում՝</b> IWA-Fi46 և IBNET-6.1</p>
<p><b>Նկարագիր՝</b> Չհաշվառվող ջուրը (ՉՋ) ջրի այն մասնաբաժինն է, որն արտադրվել է, բայց կորել է՝ նախքան վերջնական Բաժանորդներին հասնելը:</p> <p>Առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառումը գրանցված Բաժանորդների կողմից առանց ջրաչափերի հաշվառած ամբողջ ջրի սպառումն է՝ ըստ հաշվարկների և/կամ սահմանված նորմերի համաձայն Կիրառվող օրենսդրության:</p>
<p><b>Նպատակ՝</b> Այս ցուցիչը կորդի Վարձակալին (i) կրճատել սպասարկման տարածքի ՉՋ-ը և (ii) ճիշտ չափել ջրի սպառումը:</p> <p>Սույն ՀԿՑ-ում չհաշվառված ջրի հաշվարկը բացառապես սույն Պայմանագրի կատարողական ցուցանիշի սահմանման նպատակով է և այս ցուցանիշն այլ նպատակներով օգտագործվել չի կարող:</p>
<p><b>Հաշվարկման մեթոդ՝</b></p> $KPI\ CF1 = \frac{(\text{Գրանցված ջրի ծավալ} - \text{Ջրաչափերով գրանցված ջրի սպառում})}{\text{Գրանցված ջրի ծավալ}} \times 100 (\%)$
<p><b>Սահմանումներ՝</b></p> <p><u>Համակարգի մուտքի ծավալը</u> Պայմանագրային տարվա ընթացքում ջրամատակարարման համակարգ մուտք գործած ջրի ծավալն է:</p> <p>Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում տեղադրված խոշոր ջրաչափերով համալրված աղբյուրներից արտադրված ջրի ծավալը պետք է չափվի խոշոր ջրաչափերով: Այն աղբյուրների համար, որոնք համալրված չեն խոշոր ջրաչափերով, Վարձակալը պարտավոր է տրամադրել լավագույն հնարավոր հաշվարկները, որոնք պետք է վավերացվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից:</p> <p>Սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից ջրի ծավալը բոլոր աղբյուրներից պետք է չափվի ստուգաչափված խոշոր ջրաչափերով, և CF1-ի հաշվարկի համար կիրառելի և ընդունելի կլինի միայն ջրաչափված ջրի արտադրությունը:</p>

**ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)**

*Ջրաչափերով գրանցված ջրի սպառումը* Պայմանագրային տարվա ընթացքում ջրաչափերով գրանցված և, համապատասխանաբար, գրանցված Բաժանորդներից հաշվառած ջրի ծավալն է:

**Բացառություններ՝** Ոչ մի բացառում կամ բացառություն չպետք է արվի:

**Պահանջներ՝** Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է մշակի և կիրառի ջրի արտադրանքի մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ըստ խոշոր ջրաչափերի, որոնք պետք է չափեն ջրի արտադրանքը սպասարկման ողջ տարածքում: Այս պլանը և ռազմավարությունը պետք է վերանայվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից, ով պարտավոր է առաջարկություններ անել առաջարկված պլանի բարելավման համար է, եթե այդպիսիք կան:

**Ելակետային արժեքներ (ԵԱ)՝** Վարձակալը պետք է սահմանի ՀԿՑ CF1 – ի ելակետային արժեքը՝ հիմք ընդունելով Բազիսային տարվա ժամանակահատվածում գրանցված հասանելի տվյալները և տեղեկատվությունը:

Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ստուգի, հաստատի և, անհրաժեշտության դեպքում, համապատասխանեցնի այս ելակետային արժեքը: Ելակետային արժեքները պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:

**Նորմալ Գործող Ստանդարտ (ՆԳՍ) և Վատ Կատարողական մակարդակ (ՎԿՄ):** ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը կախված են համապատասխան ելակետային արժեքներից (ԵԱ): Առանձին պայմանագրային տարվա ՎԿՄ-ը կախված է տվյալ պայմանագրային տարվա ՆԳՍ-ից, բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից: ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:

	<b>ՊՏ 1</b>	<b>ՊՏ 2</b>	<b>ՊՏ 3</b>	<b>ՊՏ 4</b>	<b>ՊՏ 5</b>	<b>ՊՏ 6</b>	<b>ՊՏ 7</b>	<b>ՊՏ 8</b>
<b>ՎԿՄ</b>	-	ԵԱ	ԵԱ	ԵԱ	ԵԱ – 2%	ԵԱ – 4%	ԵԱ – 6%	ԵԱ – 8%
<b>ՆԳՍ</b>	-	ԵԱ – 3%	ԵԱ – 6%	ԵԱ – 9%	ԵԱ – 12%	ԵԱ – 14%	ԵԱ – 16%	ԵԱ – 18%
	<b>ՊՏ 9</b>	<b>ՊՏ 10</b>	<b>ՊՏ 11</b>	<b>ՊՏ 12</b>	<b>ՊՏ 13</b>	<b>ՊՏ 14</b>	<b>ՊՏ 15</b>	
<b>ՎԿՄ</b>	ԵԱ – 10%	ԵԱ – 12%	ԵԱ – 14%	ԵԱ – 16%	ԵԱ – 18%	ԵԱ – 19%	ԵԱ – 20%	
<b>ՆԳՍ</b>	ԵԱ – 20%	ԵԱ – 22%	ԵԱ – 24%	ԵԱ – 26%	ԵԱ – 28%	ԵԱ – 29%	ԵԱ – 30%	

ՀԿՑ CF1-ի ՎԿՄ-ի նվազագույն արժեքը 55% է  
 ՀԿՑ CF1-ի ՆԳՍ-ի նվազագույն արժեքը 45% է

**ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)**

**Տուժանքներ՝** ՀԿՑ CF1 - ը ենթակա է տուժանքների համապատասխան Պայմանագրային տարվա ՆԳՍ-ից ավելի վատ տարեկան կատարողականի դեպքում, բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից: Տուժանքը պետք է հաշվարկվի ըստ Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված ՀԿՑ արժեքների:

Դեպք 1: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) CF1-ի ձեռք բերված կատարողականը հավասար էր, կամ ավելի վատ, քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$KPI_{CF1} \geq WPL_{KPI_{CF1}}:$$

$$PEN_{KPI_{CF1}} = 0.05 \times W_{KPI_{CF1}} \times \text{[Penalty Factor]}$$

Եթե Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում Վարձակալին չի հաջողվում ներդնել խոշոր ջրաչափերի վրա հիմնված ջրի արտադրության չափման համակարգ, և նրան բացառապես չի հաջողվում չափել ջրի արտադրանքը խոշոր ջրաչափերով, ապա սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$PEN_{KPI_{CF1}} = 0.05 \times W_{KPI_{CF1}} \times \text{[Penalty Factor]}$$

Դեպք 2: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) CF1-ի ձեռք բերված կատարողականը ավելի լավ էր, քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), բայց ավելի վատ էր, քան նորմալ գործող ստանդարտը (ՆԳՍ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել տուժանք (PEN), որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$NOS_{KPI_{CF1}} < KPI_{CF1} < WPL_{KPI_{CF1}}:$$

$$PEN_{KPI_{CF1}} = 0.05 \times W_{KPI_{CF1}} \times \frac{KPI_{CF1} - NOS_{KPI_{CF1}}}{WPL_{KPI_{CF1}} - NOS_{KPI_{CF1}}} \times \text{[Penalty Factor]}$$

որտեղ՝

- Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց Ջրամատակարարման ընկերության կողմից գանձված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Հասույթը և հասույթերը առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային

<p><b>ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)</b></p> <p>տարվա ֆինանսական հաշվետվության զեկույցում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• <math>W_{KPI QS2}</math> -ը CF1-ի կշիռն է, որ հարաբերվում է սույն Պայմանագրին առնչվող այլ ՀԿՑ-ների հետ: <math>W_{KPI QS2}</math>-ը հետևյալն է՝ <ul style="list-style-type: none"> <li>○ <math>W_{KPI QS2} = 25\%</math></li> </ul> </li> </ul>
<p><b>Հաշվետվություն՝</b> Վարձակալը պետք է զեկույցի CF1-ը Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակայինն տարեկան հաշվետվություններում: Վարձակալը պետք է զեկույցի ՀԿՑ արժեքները, ինչպես նաև համապատասխան հաշվարկի մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p>
<p><b>Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝</b> Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները CF1-ի առումով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ջրի արտադրության մոնիտորինգի պլանի և ռազմավարության վերանայում,</li> <li>• անհրաժեշտության դեպքում՝ ջրի արտադրության մոնիտորինգի պլանի բարելավման առաջարկությունների տրամադրում,</li> <li>• անհրաժեշտության դեպքում՝ զեկույցված ՀԿՑ արժեքների տարեկան ստուգում և դրանց վերահաշվարկում,</li> <li>• CF1-ին վերաբերող Վարձակալի հաշվետվության գնահատում, և</li> <li>• CF1-ին վերաբերող Վարձակալի հաշվետվությանն առնչվող առաջարկությունների տրամադրում:</li> </ul>
<p><b>Ֆինանսական Աուդիտորի ներգրավվածությունը՝</b> Պայմանագրի տևողության ընթացքում Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի և Վարձակալի Հասույթը ներկայացնի յուրաքանչյուր Պայմանագրային Տարվա տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվության մեջ:</p>

**(4) ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն**

ՀԿՑ CS3-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-4-ում:

Աղյուսակ 6-4՝ ՀԿՑ CS3-ի հաշվարկման մեթոդաբանությունը (Բաժանորդների բավարարվածությունը)

<p><b>ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն</b></p>
<p><b>Վկայակոչում՝</b> Լավագույն փորձը</p>
<p><b>Նկարագիր՝</b> Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից իրականացված Բաժանորդների կարծիքների հարցախույզ՝ Սպասարկման տարածքում ջրամատակարարման ծառայությունների որակի վերաբերյալ, որպեսզի չափվի Բաժանորդների բավարարվածության աստիճանը ի դեմս նրանց ակնկալիքների:</p>
<p><b>Նպատակ՝</b> Չափել Բաժանորդների բավարարվածության աստիճանը Վարձակալի կողմից տրամադրված ջրամատակարարման ծառայությունների որակի վերաբերյալ:</p>

## ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն

### Հաշվարկման մեթոդ՝

Բաժանորդների բավարարվածությունը պետք է պարզել տարեկան անկախ հարցախույզների միջոցով, որոնք պետք է գնահատեն Բաժանորդների բավարարվածությունը հետևյալ ասպեկտներից յուրաքանչյուրի վերաբերյալ՝

- ջրի որակը,
- ջրամատակարարման շարունակականությունը,
- ջրամատակարարման ժամանակացույցերի խախտումներ,
- Բաժանորդների հարաբերությունները և
- հաշվառում:

Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի ամենամյա հարցախույզ սկսած Պայմանագրային առաջին (1) տարվանից: Հարցված Բաժանորդների քանակը պետք է լինի առնվազն՝

- 400 Երևան քաղաքի համար,
- 400 ջրամատակարարման ընկերության սպասարկման տարածքի այլ քաղաքային բնակավայրերի համար և
- 400 ջրամատակարարման ընկերության սպասարկման տարածքի գյուղական բնակավայրերի համար:

Բաժանորդները կնտրվեն պատահականության սկզբունքով Բաժանորդների տվյալների բազայից Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից:

Սկսած Պայմանագրային երկրորդ (2) տարվանից Անկախ Տեխնիկական Աուդիտորը կգնահատի Բաժանորդների բավարարվածությունը ըստ իրականացված հարցախույզի հետևյալ կերպ՝

- A1՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է անբավարար և վատթարանում է նախորդ Պայմանագրային տարվա համեմատ, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A1
- A2՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է անբավարար և համեմատելի է նախորդ Պայմանագրային տարվան, ինչը նշանակում է, որ բարելավումներ չեն նկատվում, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A2
- A3՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է անբավարար, բայց նկատելի են մեծ բարելավումներ նախորդ Պայմանագրային տարվա համեմատ, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A3
- A4՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է բավարար, բայց վատթարանում է նախորդ Պայմանագրային տարվա համեմատ, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A4
- A5՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է բավարար և բարելավվում է նախորդ Պայմանագրային տարվա համեմատ, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A5

<b>ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն</b>
<p><b>Սահմանումներ՝</b></p> <p><i>Հարցախույզն</i> շանակում է ջրամատակարարման ծառայություն որակի վերաբերյալ մասնագիտորեն ձևակերպված հարցերին տրված Բաժանորդների պատասխանների անկախ հավաքագրում:</p>
<p><b>Բացառություններ՝</b></p> <p>1) Կբացառվեն կեղտաջրերի հեռացման ծառայությունները:</p> <p>2) Վարձակալի անձնակազմը իրավունք չունի մասնակցելու հարցախույզին:</p>
<p><b>Պահանջներ՝</b></p> <p>1) Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է անց կացնի տարեկան հարցախույզեր:</p> <p>2) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է մշակի և կիրառի Բաժանորդների բողոքների մոնիտորինգի պլան և ռազմավարություն: Այս պլանը և ռազմավարությունը պետք է վերանայվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից, ով պարտավոր է առաջարկություններ անել առաջարկված պլանի բարելավման համար է, եթե այդպիսիք կան:</p> <p>3) Սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից Վարձակալը պարտավոր է հետամուտ լինել և արձանագրել բոլոր բողոքները և հաշվառումների վերաբերյալ հարցումները՝ ստեղծված Բաժանորդների սպասարկման կենտրոն(ներ)ի միջոցով:</p>
<p><b>Ելակետային արժեքներ (ԵԱ)</b>՝ Ելակետային արժեք (ԵԱ) կհամարվի Պայմանագրային առաջին (1) տարվա ժամանակահատվածում անց կացված հարցախույզը:</p>
<p><b>Նորմալ Գործող Ստանդարտ (ՆԳՍ) և Վատ Կատարողական մակարդակ (ՎԿՄ)</b>՝ Չկան</p>
<p><b>Տուժանքներ՝</b> CS3- ը ենթակա է տուժանքների, եթե Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից տարեկան կատարողականը բնութագրվել է որպես A1 կամ A2՝ համաձայն CS3-ի Հաշվարկման մեթոդում տրված նկարագրի:</p> <p>Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է հաշվարկի տուժանքը՝ ըստ Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված ՀԿՑ արժեքի հետևյալ կերպ՝</p>



**ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն**

Դեպք 1՝ KPI CS3 = A1:

$$PEN_{KPI CS3} = 0.05 \times W_{KPI CS3} \times 1000000 \text{ ₺}$$

Դեպք 2՝ KPI CS3 = A2:

$$PEN_{KPI CS3} = 0.05 \times W_{KPI CS3} \times 0.50 \times 1000000 \text{ ₺}$$

որտեղ՝

- Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց Ջրամատակարարման ընկերության կողմից գանձված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Հասույթը և հասույթը առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային տարվա ֆինանսական հաշվետվության զեկույցում:
- $W_{KPI QS2}$  -ը CS2-ի կշիռն է, որը հարաբերվում է սույն Պայմանագրին առնչվող այլ ՀԿՑ-ների հետ:  $W_{KPI QS2}$  -ը հետևյալն է՝

○  $W_{KPI QS2} = 15\%$

**Հաշվետվություն՝** Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է զեկուցի իրականացված հարցախույզի և համապատասխան գնահատման արդյունքները:

**Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝** Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները CS3 -ի առումով՝

- Բաժանորդների բավարարվածության տարեկան հարցախույզի իրականացում,
- Բաժանորդների բավարարվածության գնահատում՝ ըստ հարցախույզի արդյունքների:

**Ֆինանսական Աուդիտորի ներգրավվածությունը՝** Պայմանագրի տևողության ընթացքում Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի և Վարձակալի Հասույթը ներկայացնի յուրաքանչյուր Պայմանագրային Տարվա տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվության մեջ:

**2. Ներքին Համեմատական ցուցանիշներ (ՆՀՑ-ներ)**

**(1) ՆՀՑ QS3: Մաքրված կեղտաջրերի որակը**

ՆՀՑ QS2-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-5-ում:

Աղյուսակ 6-5՝ ՆՀՑ QS3-ի հաշվարկման մեթոդաբանությունը (մաքրված կեղտաջրերի որակը)

<b>ՆՀՅ QS3՝ Մաքրված կեղտաջրերի որակը</b>
<b>Վկայակոչում՝</b> IWA-wQS5
<p><b>Նկարագիր՝</b>          QS3-ը պետք է արտացոլի ընտրված պարամետրերի համար կատարված թեստերի տոկոսը՝ պայմանագրային տարվա ընթացքում գործող ստանդարտին համապատասխանող թեստերի քանակի նկատմամբ:</p>
<p><b>Նպատակ՝</b>          Վարձակալը պետք է ապահովի, որ մաքրված կեղտաջրերը համապատասխանեն գործող ստանդարտին, ինչը, սակայն, չի նշանակում, որ Վարձակալը չպետք է իրականացնի մաքրված կեղտաջրերի որակի մոնիթորինգ և այլ պարտականություններ՝ նախանշված ՀՀ կառավարության և նախարարությունների կողմից, ինչպես նաև ՀՀ օրենքներով:</p>
<p><b>Հաշվարկման մեթոդ՝</b></p> $IBI_{QS3} = \frac{\sum_{i=1}^n \sum_{j=1}^m (T1_{ij} + T2_{ij} + T3_{ij} + T4_{ij} + T5_{ij})}{5 \times m \times n} \times 100 (\%)$ <p>որտեղ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• <math>n</math>-ը պայմանագրային տարվա օրերի թիվն է</li> <li>• <math>m</math>-ը կեղտաջրերի մաքրման կայանների (ԿՄԿ) քանակն է</li> <li>• <math>\sum_{j=1}^m T1_{ij}</math> -ը T1 պարամետրի (<b>թթվածնի քիմիական պահանջ ԹՔՊ</b>) նմուշների ընդհանուր քանակն է <math>i</math> օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի:</li> <li>• <math>\sum_{j=1}^m T2_{ij}</math> -ը T2 պարամետրի (<b>կախյալ կոշտ մասնիկներ, ԿԿՄ</b>) նմուշների ընդհանուր քանակն է <math>i</math> օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի:</li> <li>• <math>\sum_{j=1}^m T3_{ij}</math> -ը T3 պարամետրի (<b>ամոնիում - NH<sub>4</sub></b>) նմուշների ընդհանուր քանակն է <math>i</math> օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի:</li> <li>• <math>\sum_{j=1}^m T4_{ij}</math> -ը T4 պարամետրի (<b>մնացորդային քլոր</b>) նմուշների ընդհանուր քանակն է <math>i</math> օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի:</li> <li>• <math>\sum_{j=1}^m T5_{ij}</math> -ը T5 պարամետրի (<b>ընդհանուր կոլիֆորմ</b>) նմուշների ընդհանուր քանակն է <math>i</math> օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի:</li> </ul>
<b>Սահմանումներ՝</b>

## ԼՀՑ ՉՏՅ՝ Մաքրված կեղտաջրերի որակը

### Գործող ստանդարտ

Գործող ստանդարտը ՀՀ-ում ներկայումս պաշտոնապես գործող մաքրված կեղտաջրերի ստանդարտն է՝ պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ:

### Նմուշ

Նմուշը դա նմուշառման կետում մաքրված կեղտաջրերի 24-ժամվա ընթացքում հավաքված խառը նմուշն է:

### Նմուշառման կետեր

Նմուշառման կետը գտնվում է համապատասխան կեղտաջրերի մաքրման կայանի (ԿՄԿ) ելքի մոտ:

### Նմուշառման հաճախականություն

Վարձակալը պետք է յուրաքանչյուր օր նմուշառման ենթարկի բոլոր նմուշառման կետերը: Վարձակալը պետք է ներկայացնի համապատասխան արձանագրություններ նմուշի վերաբերյալ՝ առնվազն նշելով՝

- նմուշառման օրը, ժամը և անցկացման վայրը,
- նմուշառմանը մասնակցած անձանց կազմը:

Չկատարված նմուշառումները համարվում են անբավարար բոլոր 5 թեստավորման պարամետրերով՝ T1, T2, T3, T4 և T5:

### Թեստավորման հաճախականություն

Բոլոր 5 թեստավորման պարամետրերը՝ T1, T2, T3, T4 և T5 պետք է թեստավորվեն յուրաքանչյուր օր: Վարձակալը պետք է ներկայացնի արձանագրություններ թեստավորման վերաբերյալ համապատասխան գրանցամատյանում՝ նշելով օրը, ժամը, թեստավորման համապատասխան արդյունքները, ինչպես նաև գործող ստանդարտում նշված սահմանային արժեքի համապատասխանությունը:

Վերցված նմուշներից ստացված այն պարամետրերը, որոնք վարձակալը չի վերլուծել, համարվում են անբավարար:

### **Բացառություններ՝**

բացառություններ չպետք է արվեն:

### **Պահանջներ՝**

Պայմանագրային առաջին տարում (1) Վարձակալը պետք է մշակի և իրականացնի մաքրված կեղտաջրերի որակի մոնիթորինգի պլան և ռազմավարություն, որոնք պետք է ուսումնասիրվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորների կողմից, որից հետո, անհրաժեշտության դեպքում, աուդիտորները պետք է ներկայացնեն առաջարկություններ պլանի բարելավման վերաբերյալ:

<b>ՆՀՑ QS3՝ Մաքրված կեղտաջրերի որակը</b>
<p><b>Հաշվետվություն՝</b> Վարձակալը պետք է ներկայացնի QS3-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p> <p>Տարեկան հաշվետվությունում Վարձակալը պետք է ներկայացնի օրական և ամսական միջին արժեքները հինգ (5) ընտրված պարամետրերի համար, որոնք կիրառվել են աղյուսակային և գծապատկերային ձևաչափերով հաշվարկի մեջ: Այնուհետև, այն նմուշները, որոնք վարձակալը չի կարողացել վերցնել, պետք է հստակորեն արձանագրվեն՝ նշելով օրը և նմուշառման պլանից շեղվելու պատճառը:</p>
<p><b>Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝</b> Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի QS3-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• մաքրված կեղտաջրերի որակի մոնիթորինգի պլանի ուսումնասիրություն</li> <li>• մաքրված կեղտաջրերի որակի մոնիթորինգի պլանի բարելավման վերաբերյալ առաջարկություններ</li> <li>• ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում,</li> <li>• վարձակալի կողմից ներկայացված QS3-ի վերաբերյալ հաշվետվության գնահատական և</li> <li>• QS3-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:</li> </ul>

(2) **ՆՀՑ OR1՝ Պոմպերի զննում և սպասարկում**  
ՆՀՑ OR1-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-6-ում:

Աղյուսակ 6-6՝ ՆՀՑ OR1-ի Հաշվարկման մեթոդաբանությունը (Պոմպերի զննում և սպասարկում)

<b>ՆՀՑ OR1՝ Պոմպերի զննում և սպասարկում</b>
<b>Վկայակոչում՝</b> IWA-Op1
<p><b>Նկարագիր՝</b> Համապատասխան պայմանագրային տարվա ընթացքում զննման և սպասարկման ենթակա ջրամատակարարման պոմպերի տոկոսը՝ արտահայտված կիլովատային (կՎ) նոմինալ հզորությամբ:</p>
<p><b>Նպատակ՝</b> OR1-ը պետք է դրդի վարձակալին պոմպերը պատշաճ կերպով շահագործել և սպասարկել,</p>

## ՆՎՑ OR1՝ Պոմպերի զննում և սպասարկում

ինչպես նաև վերանորոգել և փոխարինել սպասարկման տարածքում տեղադրված վնասված պոմպերը:

### Հաշվարկման մեթոդ՝

$$IBI OR1 = \frac{\sum_{i=1}^n P_i}{P_{total}} \times 100 (\%)$$

որտեղ՝

- $n$ -ը տեղադրված պոմպերի քանակն է, որոնք, պայմանագրային տարվա ընթացքում շահագործվելով, ենթարկվել են զննման և սպասարկման,
- $P_i$ -ը շահագործման ընթացքում զննված և սպասարկված  $i$  պոմպի կՎ-երով արտահայտված նոմինալ հզորությունն է,
- $P_{total}$  -ը տեղադրված պոմպերի ընդհանուր նոմինալ հզորությունն է կՎ-երով:

### Սահմանումներ՝

#### Նոմինալ հզորություն (P)

Տեղադրված պոմպերի նոմինալ հզորությունը դա պոմպերի նոմինալ հզորությունն է՝ սահմանված համապատասխան արտադրողի կողմից:

Հեռացված պոմպի նոմինալ հզորությունը դա պոմպերի նոմինալ հզորությունն է՝ նշված դիզայնի վերաբերյալ համապատասխան փաստաթղթում:

#### Տեղադրված պոմպեր

Տեղադրված պոմպերն այն պոմպերն են, որոնք (i) տեղադրված են և շահագործվում են, (ii) տեղադրված են, բայց դեռ չեն շահագործվում՝ լինելով պատրաստ շահագործման համար (iii) տեղադրված, բայց վնասված կամ ջարդված պոմպերը և (iv) շահագործման համար ոչ ենթակա հեռացված պոմպերը:

### Բացառություններ՝

Բացառությունները պետք է հաշվի առնվեն յուրաքանչյուր կոնկրետ հեռացված պոմպի դեպքում, օրինակ, երբ համապատասխան պոմպակայանի հնարավորությունները շատ ավելին են, քան իրական կարիքները: Վարձակալը պետք է հստակորեն արձանագրի և հիմնավորի նման դեպքերը:

### Հաշվետվություն՝

Վարձակալը պետք է ներկայացնի OR1-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես

<b>ՆՀՑ OR1՝ Պոմպերի զննում և սպասարկում</b>
Նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:
<p><b>Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝</b> Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի OR1-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում,</li> <li>• Վարձակալի կողմից OR1-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատում և</li> <li>• OR1-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:</li> </ul>

**(3) ՆՀՑ OR3: Կոյուղու զննում և սպասարկում**

ՆՀՑ OR3-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-7-ում:

Աղյուսակ 6-7՝ ՆՀՑ OR3-ի Հաշվարկման մեթոդաբանություն (Կոյուղու զննում և սպասարկում)

<b>ՆՀՑ OR3՝ Կոյուղու զննում և սպասարկում</b>
<b>Վկայակոչում՝</b> IWA-wOp1
<p><b>Նկարագիր՝</b> OR3-ն արտացոլում է զննված կոյուղու ցանցի տոկոսային հարաբերությունը ընդհանուր կոյուղու ցանցի երկարության նկատմամբ:</p>
<p><b>Նպատակ՝</b> Վարձակալը պետք է կատարի կոյուղու ցանցի պարբերական զննումներ, որպեսզի՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• բացահայտի թերությունները (վնասներ կամ խցանումներ),</li> <li>• ժամանակին կանխի հնարավոր վնասները,</li> <li>• նվազեցնի հողաջրերի և ջրերի ներթափանցումը այլ չնախատեսված տեղերից,</li> <li>• նվազեցնի հողաջրերի աղտոտվածությունը և</li> <li>• իրականացնի արդյունավետ շահագործման և վերանորոգման աշխատանքներ:</li> </ul>
<p><b>Հաշվարկման մեթոդ՝</b></p> $IBI\ OR3 = \frac{L_{inspected}}{L_{total}} \times 100\ (\%)$ <p>որտեղ՝</p>

<b>ՆՀՑ OR3՝ Կոյուղու զննում և սպասարկում</b>
<ul style="list-style-type: none"> <li>• <math>L_{inspected}</math> –ը Պայմանագրային տարում զննված կոյուղու ցանցի երկարությունն է,</li> <li>• <math>L_{total}</math> –ը կոյուղու ցանցի ընդհանուր երկարությունն է Պայմանագրային տարվա վերջի դրությամբ:</li> </ul>
<p><b>Սահմանումներ՝</b></p> <p><u>Ձևնում</u>– Ձևումները պետք է ներառեն(i) մեխանիկական օպտիկական զննումներ,(ii) առցանց զննումներ հեռակառավարվող սարքերով և (iii)հեռուստատեսային զննումներ: Վարձակալը պետք է նաև զննումներ կատարի պարզելու համար խցանումների պատճառները:</p> <p>Վարձակալը պետք է հստակորեն արձանագրի զննումները, ինչպես նաև գրանցի թերությունները, օրինակ, վնասները և խցանումները: Արձանագրությունում պետք է առնվազն նշվի վնասների, խցանումների և զննումների օրը, տեղը, տեսակը, վայրը և կցվի լուսանկարը: Վարձակալը նաև պետք է անմիջապես նախաձեռնի արձանագրված թերությունների վերանորոգման աշխատանքները:</p>
<p><b>Բացառություններ՝</b> բացառություններ չպետք է արվեն:</p>
<p><b>Պահանջներ՝</b></p> <p>1) Պայմանագրային առաջին (1), երկրորդ (2) և երրորդ (3) տարիների ընթացքում Վարձակալը պետք է նախապատրաստի սպասարկման տարածքի հիդրավլիկ մոդելներ, որոնք համատեղելի են կոյուղու ցանցի ընթացիկ GIS-ի հետ: Հիդրավլիկ մոդելները պետք է ընդգրկեն սպասարկման տարածքի բոլոր համապատասխան ակտիվները և պետք է հիմնվեն GIS-ում մուտքագրված տվյալների վրա:</p> <p>2) Պայմանագրային առաջին (1), երկրորդ (2) և երրորդ (3) տարիների ընթացքում վարձակալը պետք է նախապատրաստի GIS աշխարհագրական տվյալների բազա:</p>
<p><b>Հաշվետվություն՝</b></p> <p>Վարձակալը պետք է ներկայացնի OR3-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p>
<p><b>Անկախ տեխնիկական աուդիտորի ներգրավվածությունը</b>Անկախ տեխնիկական աուդիտորը պետք է իրականացնի OR3-ի հետ կապված հետևյալ գործողությունները:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ,</li> </ul>

**ՆՀՑ OR3՝ Կոյուղու գնում և սպասարկում**

անհրաժեշտության դեպքում,

- Վարձակալի կողմից OR3-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատում և
- OR3-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:



**(4) ՆՇ OR4՝ Ենթակառուցվածքների ընդհանուր շահագործում և նորոգում**

ՆՇ OR4-ի Հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-8-ում:

Աղյուսակ 6-8՝ ՆՇ OR4-ի (Ենթակառուցվածքների ընդհանուր սպասարկում, վերանորոգում և նորոգում) հաշվարկման մեթոդաբանություն

<b>ՆՇ OR4: Ենթակառուցվածքների ընդհանուր շահագործում և նորոգում</b>
<p><b>Վկայակոչում՝</b> չկա</p>
<p><b>Նկարագիր՝</b> Այս ցուցիչով չափվում է ընդհանուր շահագործումը, այդ թվում, վարձակալի կողմից իրականացվող ենթակառուցվածքների նորոգման և վերանորոգման աշխատանքները: Ուսումնասիրության պետք է ենթարկվեն ընդհանուր սպասարկումը, պատուհանները, ցանկապատները, դարպասները, սեպտիկ բաքերը, դռները և ցուցանակները:</p>
<p><b>Նպատակ՝</b>                      Այս ցուցիչը պետք է դրդի վարձակալին պահպանել տեղանքը մաքուր, կեղտ ու փոշուց զատ, ինչպես նաև իրականացնել ենթակառուցվածքների ընդհանուր սպասարկման, վերանորոգման և նորոգման աշխատանքներ:</p>
<p><b>Հաշվարկման մեթոդ՝</b></p> $IBI OR4 = \frac{\text{Վատից բարձր գնահատված Ենթակառուցվածքների քանակը}}{\text{Ենթակառուցվածքների ընդհանուր քանակ}} \times 100 (\%)$
<p><b>Սահմանումներ՝</b></p> <p><u>Ենթակառուցվածք</u>                      Ենթակառուցվածք են համարվում</p> <ul style="list-style-type: none"> <li>• պոմպակայանները,</li> <li>• ամբարները,</li> <li>• ջրամաքրման կայանները և</li> <li>• կեղտաջրերի մաքրման կայանները:</li> </ul> <p><u>Վատ</u>– Վատ վիճակում է գտնվում այն ենթակառուցվածքը, որտեղ առկա են հետևյալ գործոններից երկուսը՝</p>

<b>ՆՀՑ OR4: Ենթակառուցվածքների ընդհանուր շահագործում և նորոգում</b>
<ul style="list-style-type: none"> <li>• կեղտ ու փոշի,</li> <li>• վնասված կամ գոյություն չունեցող պաշտպանիչ ցանկապատներ,</li> <li>• վնասված կամ գոյություն չունեցող պաշտպանիչ դարպասներ,</li> <li>• ջարդված պատուհաններ և դռներ,</li> <li>• ջարդված կամ գոյություն չունեցող զուգարաններ,</li> <li>• վնասված կամ լցված սեպտիկ բաքեր և</li> <li>• ջարդված կամ գոյություն չունեցող ցուցանակներ:</li> </ul>
<b>Բացառություններ՝</b> բացառություններ չպետք է արվեն:
<p><b>Հաշվետվություն՝</b>          Վարձակալը պետք է ներկայացնի OR4-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p>
<p><b>Անկախ տեխնիկական աուդիտորի ներգրավվածությունը՝</b> Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի OR4-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում,</li> <li>• Վարձակալի կողմից OR4-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատում և</li> <li>• OR4-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:</li> </ul>

(5) **ՆՀՑ OR5՝ Ջրամատակարարման ընդհատումների քանակը**  
 ՆՀՑ OR5-ը չափվում է համաձայն Կառավարության Ն883-Ն որոշման, ընդունված 2014թ.-ի օգոստոսի 14-ին: ՆՀՑ OR5 հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-9-ում:

Աղյուսակ 6-9՝ ՆՀՑ OR5 հաշվարկման մեթոդաբանությունը (ջրամատակարարման ընդհատումների քանակը)

<b>ՆՀՑ OR5՝ Ջրամատակարարման ընդհատումների քանակը</b>
<b>Վկայակոչում՝</b> IWA-OS13
<b>Նկարագիր՝</b> Այս ցուցիչով չափվում է ջրամատակարարման չնախատեսված ընդհատումների քանակը:
<b>Նպատակ՝</b> Այս ցուցիչը պետք է դրդի վարձակալին պարբերաբար իրականացնել սպասարկման և

<b>ՆՀՑ OR5՝ Ջրամատակարարման ընդհատումների քանակը</b>
զննման աշխատանքներ՝ կանխելու համար ջրամատակարարման խոշոր և երկարատև ընդհատումները:
<p><b>Հաշվարկման մեթոդ՝</b></p> $IBI\ OR5 = \sum_{i=1}^n I_i$ <p>որտեղ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• <math>n</math>-ը ջրամատակարարման ընդհատումների քանակն է,</li> <li>• <math>I_i</math>-ը ջրամատակարարման ընդհատումներն են:</li> </ul>
<p><b>Սահմանումներ՝</b></p> <p><u>Ջրամատակարարման ընդհատումները (Ը)</u> Ջրամատակարարման ընդհատումները մատակարարման այն ընդհատումներն են, որոնք նախատեսված չեն և որի արդյունքում խողովակներում հոսքը դադարում է:</p> <p><u>Ջրամատակարարման նախատեսված ընդհատումներն</u> այն ընդհատումներն են, որի ժամանակ հանրությունը տեղեկացվում է ջրամատակարարման ընդհատման մասին առնվազն մեկ (1) շաբաթ առաջ:</p>
<p><b>Բացառություններ՝</b></p> <p>Ջրամատակարարման նախատեսված ընդհատումները պետք է հաշվարկից հանել:</p>
<p><b>Հաշվետվություն՝</b></p> <p>Վարձակալը պետք է ներկայացնի OR5-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p>
<p><b>Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝</b> Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի OR5-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում,</li> <li>• Վարձակալի կողմից OR5-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատական և</li> <li>• OR5-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:</li> </ul>

**(6) ՆՀՑ OR2՝ Ջրաչափերի փոխարինում և ստուգաչափում**

ՆՀՑ OR2-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-10-ում:

Աղյուսակ 6-10՝ ՆՀՑ OR2-ի հաշվարկման մեթոդաբանությունը (Ջրաչափերի փոխարինում և ստուգաչափում)

<b>ՆՀՑ OR2՝ Ջրաչափերի փոխարինում և ստուգաչափում</b>
<b>Վկայակոչում՝</b> IWA-Op8
<b>Նկարագիր՝</b> Պայմանագրային տարվա ընթացքում նոր տեղադրված կամ ISO 4064 ջրաչափերի ճշտության դասին հավասար, կամ ավելի բարձր դասի, ստուգված և ստուգաչափված ջրաչափերով ցանցերին միացած բնակչության տոկոսը:
<b>Նպատակ՝</b> Այս ՆՀՑ-ի նպատակն է դրդել Վարձակալին բարելավել առկա ջրաչափերի չափման ճշտությունը՝ նվազեցնելու համար ջրի կորուստը և համապատասխան չհաշվառվող ջուրը (ՉՋ):
<b>Հաշվարկման մեթոդ</b> $KPI\ OR2 = \frac{C_{replaced\ or\ calibrated}}{C_{total}} \times 100\ (\%)$ որտեղ՝ <ul style="list-style-type: none"><li>• <math>C_{replaced\ or\ calibrated}</math> –ն Պայմանագրային տարվա ընթացքում (i) նոր բաժանորդների համար տեղադրված ջրաչափերի և (ii) առկա բաժանորդների համար ստուգաչափված ջրաչափերի գումարն է,</li><li>• <math>C_{total}</math> – ն Պայմանագրային տարվա վերջի դրությամբ բաժանորդների տվյալների բազայում գրանցված բաժանորդների ընդհանուր քանակն է:</li></ul> ՀԿՑ արժեքը պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:
<b>Սահմանումներ՝</b> <u>Ջրաչափի դասն</u> շանակում է ISO 4064-ով նախատեսված ջրաչափի դաս <u>Ստուգաչափված ջրաչափ</u> Առկա ստուգաչափված ջրաչափը այն ջրաչափն է, որն ստուգվել է և, անհրաժեշտության

## ՆՀՑ OR2՝ Ջրաչափերի փոխարինում և ստուգաչափում

դեպքում, ստուգաչափվել հոսքի այնպիսի ճշտության չափ ունենալու համար, որ հավասար կամ ավելի բարձր է ISO 4064 դասով նախատեսված սահմանային արժեքից:

Բաժանորդների ջրաչափերի ստուգաչափումը պետք է կատարվի սարքավորումների միջոցով: Վարձակալը պետք է արձանագրի յուրաքանչյուր բաժանորդի ջրաչափը նշելով առնվազն հետևյալ ցուցանիշները՝

- համապատասխան բաժանորդի մոտից ջրաչափի հանման օրը,
- ջրաչափի համարը և տեսակը,
- համապատասխան բաժանորդի հղման համարը բաժանորդների տվյալների բազայում,
- ստուգաչափման օրը և ժամը,
- ստուգաչափումից առաջ չափված ճշտությունը և
- ստուգաչափումից հետո չափված ճշտությունը:

### Նոր ջրաչափ

Նոր ջրաչափը պետք է ունենա այնպիսի չափման ճշտություն, որ հավասար կամ ավելի բարձր լինի ISO 4064 դասով նախատեսված սահմանային արժեքից:

**Բացառություններ՝** բացառություններ չպետք է արվեն:

### **Հաշվետվություն՝**

Վարձակալը պետք է ներկայացնի OR2-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:

**Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝** Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի OR2-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝

- Վարձակալի կողմից մշակված և կատարված ջրաչափերի փոխարինման և ստուգաչափման պլանի և ռազմավարության ուսումնասիրություն,
- ջրաչափերի փոխարինման և ստուգաչափման պլանի և ռազմավարության վերաբերյալ բարելավումների առաջարկություններ, անհարաժեշտության դեպքում,
- Վարձակալի կողմից հաշվարկված նախնական արժեքների և դրանց վերահաշվարկի աուդիտ,
- ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհարաժեշտության դեպքում,
- վարձակալի կողմից OR2-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատական և
- OR2-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:

**(7) ՆՀՑ CF2՝ Հավաքագրման աստիճան**

ՆՀՑ CF2-ի հավաքագրման աստիճանի մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-11-ում:

Աղյուսակ 6-11՝ ՆՀՑ CF2-ի Հավաքագրման աստիճանի մեթոդաբանություն (հավաքագրման աստիճան)

ՆՀՑ CF2՝ Հավաքագրման աստիճան
Վկայակոչում՝ IBNET-23.2
<p><b>Նկարագիր՝</b> Պայմանագրային տարվա ընթացքում ստացված եկամտի քանակը բաժանած Պայմանագրային տարվա ընթացքում ստացված հասույթի վրա:</p>
<p><b>Նպատակ՝</b> Այս ցուցիչը պետք է դրդի Վարձակալին բարելավել հավաքագրման արդյունավետությունը և իր ֆինանսական դրությունը:</p>
<p><b>Հաշվարկման մեթոդը՝</b></p> $IBI CF2 = \frac{\text{Զրամատակարարման եկամուտ}}{\text{Զրամատակարարման համակարգի միջոցով Բաժանորդների Կեղտաջրերի հեռացման դիմաց դրամական ընդհանուր մուտքերն են:}} \times 100 (\%)$
<p><b>Սահմանումներ՝</b></p> <p><u>Հավաքագրված եկամուտ</u>(i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց դրամական ընդհանուր մուտքերն են:</p> <p><u>Հաշվեգրված Հասույթ</u>(i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց հաշվառած ընդհանուր գումարն է:</p>
<p><b>Բացառություններ՝</b> Հաշվարկից պետք է հանել եկամտի հետևյալ տեսակները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• հասույթ, որը գոյանում է ջրամատակարարման ցանցի միջոցով իրականացվող ջրի վաճառքից դուրս,</li> </ul>

<b>ՆՀՑ CF2՝ Հավաքագրման աստիճան</b>
<ul style="list-style-type: none"> <li>• հասույթ, որը գոյանում է կոյուղու ցանցի միջոցով իրականացվող ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայություններից դուրս:</li> </ul>
<p><b>Հաշվետվություն՝</b> Վարձակալը պետք է ներկայացնի հաշվետվություն CF2-ի վերաբերյալ, ինչպես նաև մանրամասն բացվածք համապատասխան հաշվարկների վերաբերյալ:</p> <p><b>Ֆինանսական Աուդիտորի ներգրավվածությունը՝</b> Ֆինանսական Աուդիտորը պետք է աուդիտի ենթարկի Հասույթը և վարձակալին տրամադրի տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվություն յուրաքանչյուր Պայմանագրային տարվա համար՝ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատված կտրվածքով:</p>

**(8) ՆՀՑ CF3՝ Գործառնական ծախսերի ծածկույթ**  
ՆՀՑ CF3-ի Հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-12-ում:

Աղյուսակ 6-12՝ ՆՀՑ CF3-ի Հաշվարկման մեթոդաբանությունը (Գործառնական ծախսերի ծածկույթ)

<b>ՆՀՑ CF3՝ Գործառնական ծախսերի ծածկույթ</b>
<b>Վկայակոչում՝</b> IWA-Fi39 և IBNET-24.1
<p><b>Նկարագիր՝</b> Ընդհանուր Հասույթը բաժանած ընդհանուր գործառնական ծախսերի վրա Պայմանագրային տարվա ընթացքում:</p>
<p><b>Նպատակ՝</b> Այս ցուցիչը պետք է ցույց տա, թե արդյոք Հասույթը գերազանցում է գործառնական ծախսերը:</p>
<p><b>Հաշվարկման մեթոդ՝</b></p> $IBI\ CF3 = \frac{\text{Գործառնական ծախսերի վրա Հասույթի մասնաբաժին}}{\text{Գործառնական ծախսերի միջին արժեք}} \times 100 (\%)$
<p><b>Սահմանումներ՝</b></p> <p><u>Ընդհանուր հասույթը</u> ընդ ներառում է Պայմանագրային տարվա ընթացքում ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների դիմաց կանխիկ գանձված վարձավճաները, ինչպես նաև այլ ծառայությունների դիմաց ստացված</p>

<b>ՆՀՑ CF3՝ Գործառնական ծախսերի ծածկույթ</b>
գումարները: Ընդհանուր հասույթը պետք է արտացոլվի ֆինանսական աուդիտորի կողմից պատրաստված ֆինանսական հաշվետվության մեջ: <u>Ընդհանուր գործառնական ծախսերը</u> պետք է արտացոլեն գործառնական ծախսերը ֆինանսական աուդիտորի կողմից պատրաստված ֆինանսական հաշվետվության մեջ:
<b>Բացառություններ՝</b> Կոյուղու ցանցի միջոցով կեղտաջրերի հեռացման ծառայություններում բացառություններ նախատեսված չեն:
<b>Հաշվետվություն՝</b> Վարձակալը պետք է ներկայացնի հաշվետվություն CF3-ի վերաբերյալ, ինչպես նաև մանրամասն բացվածք համապատասխան հաշվարկների վերաբերյալ:
<b>Ֆինանսական աուդիտորի ներգրավվածությունը՝</b> Ֆինանսական Աուդիտորը պետք է աուդիտի ենթարկի հասույթը և վարձակալին տրամադրի տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվություն յուրաքանչյուր պայմանագրային տարվա համար՝ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատված կտրվածքով:

(9) **ՆՀՑ CS1՝ Բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումները**  
ՆՀՑ CS1-ի Հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-13-ում:

Աղյուսակ 6-13՝ ՆՀՑ CS1-ի Հաշվարկման մեթոդաբանությունը (Բողոքներ և վարձավճարների հետ կապված հարցումներ)

<b>ՆՀՑ CS1՝ Բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումներ</b>
<b>Վկայակոչում՝</b> IWA-QS28, QS29, QS30, QS31, QS32, QS33 և QS34
<b>Նկարագիր՝</b> Բոլոր բաժանորդների ընդհանուր թվին ընկնող գրանցված բողոքների և վարձավճարների հետ կապված հարցումների միջին թիվը:
<b>Նպատակ՝</b> Այս ցուցիչը պետք է բարելավի բաժանորդների բավարարվածության մակարդակը վարձակալի կողմից իրականացվող գործառնությունների նկատմամբ:
<b>Հաշվարկման մեթոդը՝</b> $IBI\ CS1 = \frac{\text{Գրանցված բողոքների և վարձավճարների հետ կապված հարցումների ընդհանուր թվաքանակ}}{\text{Բաժանորդների ընդհանուր թվաքանակ}}$



**ՆՇՑ CS1՝ Բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումներ**

**Սահմանումներ՝**

Գրանցված բողոքներ և վարձավճարների հետ կապված հարցումները դրանք այն բողոքներն ու հարցումներն են, որոնք ստացվել են գրավոր, էլեկտրոնային եղանակով կամ հեռախոսով և որոնք գրանցվել են ջրամատակարարման ընկերության կողմից: Հաշվարկի մեջ մտնող բողոքների տեսակներն են՝

- ջրամատակարարման անընդհատության և ճնշման հետ կապված բողոքներ, օրինակ՝ (ցածր ճնշում, ջրամատակարարման բացակայություն, ջրամատակարարման ժամանակացույցի փոփոխություններ և այլն),
- ջրի որակի վերաբերյալ բողոքներ,
- ընդհատումների վերաբերյալ բողոքներ (վարարում, խցանում, ծորում ջրամատակարարման և կոյուղու համակարգերում),
- վարձավճարների հետ կապված բողոքներ կամ հարցումներ և
- ջրամատակարարման կամ ջրահեռացման նոր միացումների հետ կապված բողոքներ:

Բաժանորդների ընդհանուր թիվը՝ Բաժանորդների ընդհանուր թիվը համապատասխան Պայմանագրային տարվա վերջի դրությամբ բաժանորդների ընդհանուր թիվն է:

**Բացառություններ՝ Բացառություններ չպետք է արվեն:**

**Պահանջներ՝**

1) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում Վարձակալը պետք է նախապատրաստի և իրականացնի Բաժանորդների բողոքների կառավարման պլան և ռազմավարություն: Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ուսումնասիրի այդ պլանը և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնի բարելավման համար ուղղված առաջարկություններ:

2) Պայմանագրային երրորդ (3) տարվանից սկսած Վարձակալը պետք է ստանա և գրանցի բոլոր բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումները արդեն իսկ գործող Բաժանորդների սպասարկման կենտրոն(ներ)ի միջոցով:

**Հաշվետվություն՝**

Վարձակալը պետք է ներկայացնի CS1-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՇՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:

**Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝** Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի CS1-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝

<b>ՆՀՑ CS1՝ Բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում,</li> <li>• Վարձակալի կողմից CS1-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատական և</li> <li>• CS1-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:</li> </ul>

**(10) ՆՀՑ CS2՝ Գրավոր բողոք դիմումների արձագանքման ժամանակը**  
 ՆՀՑ CS2-ը չափվում է համաձայն Կառավարության Ն883-Ն որոշման՝ ընդունված 2014թ.-ի օգոստոսի 14-ին: ՆՀՑ CS2-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-14-ում:

Աղյուսակ 6-14՝ ՆՀՑ CS2-ի Հաշվարկման մեթոդաբանությունը (Գրավոր բողոք դիմումների արձագանքման ժամանակը)

<b>ՆՀՑ CS2՝ Գրավոր բողոք դիմումների արձագանքման ժամանակը</b>
<b>Վկայակոչում՝</b> IWA-QS34
<b>Նկարագիր՝</b> Նախանշված ժամանակահատվածում արձագանքված և լուծված գրավոր բողոքների տոկոսը:
<b>Նպատակ՝</b> Այս ցուցիչը պետք է բարելավի Բաժանորդների բավարարվածության մակարդակը վարձակալի գործառնությունների նկատմամբ:
<b>Հաշվարկման մեթոդ՝</b> $KPI\ CS2 = \frac{\text{Գրավոր բողոքներ և լուծված գրավոր բողոքներ}}{\text{Գրավոր բողոքներ}} \times 100\%$
<b>Սահմանումներ՝</b> <p><u>Գրավոր բողոքն</u> այն բողոքն է, որ ստացվել է գրավոր կամ էլեկտրոնային տեսքով:</p> <p><u>Նախանշված ժամանակահատվածը</u> հինգ աշխատանքային օրերի ժամանակահատվածն է, որն անհրաժեշտ է համապատասխան գրավոր բողոքին արձագանքելու համար:</p> <p><u>Տեղեկամատյան</u>՝ Վարձակալը պետք է գրանցի յուրաքանչյուր գրավոր բողոք՝ նշելով</p>

**ՆՀՑ CS2՝ Գրավոր բողոք դիմումների արձագանքման ժամանակը**

հետևյալ կետերը՝

- Բաժանորդի հիմնական տվյալները (անուն, հասցե և այլն),
- Բաժանորդի հղման համարը վերցված Բաժանորդների տվյալների բազայից,
- բողոքի տեսակը,
- բողոքի օրն ու ժամը,
- բողոքի լուծման համար պատասխանատու բաժինը,
- բողոքի լուծման համար պատասխանատու բաժնի հետ կապ հաստատելու օրն ու ժամը,
- Բաժանորդին արձագանքելու օրն ու ժամը և
- բողոքի լուծման օրն ու ժամը:

**Բացառություններ՝** Բացառություններ չպետք է արվեն:

**Պահանջներ՝**

1) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում վարձակալը պետք է նախապատրաստի և իրականացնի Բաժանորդների բողոքների կառավարման պլան և ռազմավարություն: Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ուսումնասիրի այդ պլանը և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

2) Պայմանագրային երրորդ (3) տարվանից սկսած Վարձակալը պետք է ստանա և գրանցի բոլոր բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումները արդեն իսկ գործող Բաժանորդների սպասարկման կենտրոն(ներ)ի միջոցով:

**Հաշվետվություն՝**

Վարձակալը պետք է ներկայացնի CS2-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:

**Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝** Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի CS2-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝

- Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում,
- Վարձակալի կողմից CS2-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատում և
- CS2-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:

### **3.Տուժանքներ հաշվետվությունների և աշխատանքների ուշացումների համար**

Վարձակալը տուժանք է վճարում վարձատուին՝ ՀԱՎԵԼՎԱԾ 7-ում նշված հաշվետվությունների համար նախատեսված պահանջների մեջ չտեղավորվելու համար:

Տուժանքը վճարվում է Վարձակալի կողմից՝ համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 7-ում նշված հաշվետվությունների համար նախատեսված պահանջների հետևյալ դրույթների մասով հաշվարկի՝

#### (1) Հաշվետվություն

Եթե վարձակալը խախտում է անհրաժեշտ նյութերի և հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը, նախատեսված ՀԱՎԵԼՎԱԾ 7-ով, կամ չի կատարում հաշվետվությունների համար նախատեսված պահանջները՝ համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 7-ի, ապա կիրառվում են հետևյալ տուժանքները՝

- ա) Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ՝  
275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր ուշացրած օրվա համար՝ 15 օրից ավել ուշացնելու դեպքում
- բ) Հաջորդ Պայմանագրային տարվա Բիզնես պլան (ներառյալ ուսուցման պլանը)՝  
110 000 (հարյուր տաս հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր ուշացրած օրացույցային օրվա համար՝ 15 օրացույցային օրից ավել ուշացնելու դեպքում
- գ) Հաջորդ Պայմանագրային տարվա Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը՝  
110 000 (հարյուր տասը հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր ուշացրած օրացույցային օրվա համար՝ 15 օրացույցային օրից ավել ուշացնելու դեպքում
- դ) Հատուկ դեպքերի համար հաշվետվություններ արտակարգ իրավիճակների, ատահարների, վթարների դեպքում՝ 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ տուգանք 3 օրից ավել ուշացնելու համար
- ե) Ամսական հաշվետվություններ՝  
27 500 (քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ 7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար
- զ) Եռամսյակային հաշվետվություններ՝  
275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ 7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար
- է) Կիսամյակային հաշվետվություններ՝  
275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ 7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար
- ը) Տարեկան հաշվետվություններ՝

275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու

թ) Միանվագ հաշվետվություններ՝

275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար

ժ) Հիդրավլիկ մոդելներ և GIS տվյալների բազա՝

275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար

ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվությունների ուշացման դեպքում տուժանքների առավելագույն չափը յուրաքանչյուր Պայմանագրային տարվա համար չպետք է գերազանցի Վարձակալի հասույթի 0.5%-ը:

Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց Ջրամատակարարման ընկերության կողմից գանձված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Հասույթը և հասույթները առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային տարվա ֆինանսական հաշվետվության զեկուցում:

(2) Աշխատանքների ուշացումներ

Այն դեպքերում, երբ Վարձակալն է պատասխանատվություն կրում Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված ՄՖԿ գնումների հետ կապված աշխատանքների ուշացման համար, վարձակալը հանձնառության վճար է վճարում ՀՀ Ֆինանսների նախարարության հատուկ հաշվեհամարին, նշված Հավելված 1-ում որպես Վարձակալի Վճար (ՀԱՎԵԼՎԱԾ 1.1.4)՝ վարկի ուշացված գումարների չվճարման համար:

#### 4. Տուժանքների ծանուցում

Յուրաքանչյուր Պայմանագրային տարի Անկախ Տեխնիկական Աուդիտորը Տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման տարեկան աուդիտի նախագծին կից հավելվածով Կողմերին ներկայացնում է նախորդ Պայմանագրային տարվա տուժանքների հաշվարկը: Կողմերը պետք է ստուգեն տուժանքների հաշվարկը: Վարձակալի կողմից վճարման ենթակա տուժանքի գումարի վերաբերյալ ցանկացած անհամաձայնության դեպքում, Կողմերը պետք է իրենց առարկությունները 15 օրվա ընթացքում ներկայացնեն Անկախ Տեխնիկական Աուդիտորին: Վարձակալի կողմից վճարման ենթակա տուժանքի գումարի վերջնական չափը սահմանվում է Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից՝ Տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման տարեկան աուդիտի ավարտական զեկուցի համաձայն:

Վարձակալի կողմից տուժանքների վճարումն իրականացվում է երեսուն աշխատանքային օրվա ընթացքում՝ Տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման տարեկան աուդիտի

ավարտական զեկույցի ստացման օրվանից: Վարձակալը պետք է փոխանցի վճարման համար անհրաժեշտ գումարը Վարձատուի համապատասխան բանկային հաշվեհամարին:

# ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ներկայացվող Հաշվետվություններ

Վարձակալը Վարձատուին ստորև բերված հաշվետվությունները պարտավոր է ներկայացնել հետևյալ հաճախականությամբ.

### (1). Մեկանգամյա հաշվետվությունների ներկայացում

Վարձակալի կողմից միանգամյա ներկայացման հաշվետվությունները ներառում են հետևյալ փաստաթղթերը՝

- (ա) Ճնշման մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո .
- (բ) Ջրի որակի մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո .
- (գ) Ջրի արտադրության մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո .
- (դ) Բաժանորդների բողոքների կառավարման պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո .
- (ե) Կեղտաջրերի և մաքրված կեղտաջրերի մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո .
- (զ) Բազիսային տարվա տվյալների հաշվետվություն՝ ամենաուշը մինչև 2018 թվականի մարտի 31-ը:

Այս պլաններն ու ռազմավարությունները պետք է վերլուծվեն, ուսումնասիրվեն Անկախ տեխնիկական աուդիտորի կողմից և ենթակա են հաստատման Անկախ տեխնիկական աուդիտորի կողմից:

### (2). Հիդրավլիկական մոդելներ և ԱՏՀ (GIS) տեղեկատվական բազաներ

Վարձակալի կողմից պետք է մշակվեն և պարբերաբար թարմացվեն հետևյալ հիդրավլիկական մոդելները և ԱՏՀ (GIS) տեղեկատվական բազաները՝

- (ա) Ջրամատակարարման ցանցերի հիդրավլիկական մոդել՝ ամենաուշը Պայմանագրային 3-րդ Տարվա վերջում .
- (բ) Ջրահեռացման ցանցերի հիդրավլիկական մոդել՝ ամենաուշը Պայմանագրային 3-րդ Տարվա վերջում .
- (գ) Ջրամատակարարման ցանցերի ԱՏՀ (GIS) տեղեկատվական բազա՝ ամենաուշը Պայմանագրային 3-րդ Տարվա վերջում .

- (դ) Զրահեռացման ցանցերի ԱՏՀ (GIS) տեղեկատվական բազա՝ ամենաուշը Պայմանագրային 3-րդ Տարվա վերջում.

### **(3). Տարեկան հաշվետվություններ**

- (ա) Վարձակալն իր յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար Վարձատուին պարտավոր է ներկայացնել աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները՝ Կիրառվող օրենսդրությանը և ՖՀՄՄ-ների համաձայն՝ հաջորդ ֆինանսական տարվա երկրորդ եռամսյակի ավարտին:
- (բ) Վարձակալը յուրաքանչյուր Պայմանագրային տարվա համար պարտավոր է ներկայացնել Տարեկան Հաշվետվություն: Վարձակալի հաշվետվությունը պետք է ներառի կորպորատիվ, տեխնիկական և ֆինանսական առումով տարեկան առաջընթացը, Հավելված 6-ում ներկայացված հիմնական կատարողական ցուցանիշների (ԼԿՑ) և Հավելված 6-ում ներկայացված ներքին համեմատական ցուցանիշների (ՆՀՑ) գծով տարեկան առաջընթացը, ինչպես նաև տուժանքների հաշվարկները՝ համաձայն Հավելված 6-ի: Վարձակալի կողմից տարեկան հաշվետվությունները պետք է ներկայացվեն համապատասխան Պայմանագրային տարվա ավարտից հետո 90 օրյա ժամկետում և պետք է ներառեն նաև 4-րդ եռամսյակի պահանջվող հաշվետվությունը: Տարեկան հաշվետվությունների գծով հաստատում չի պահանջվում: Վարձակալը պետք է Անկախ տեխնիկական աուդիտորի հետ համաձայնեցնի հաշվետվությունների ձևաչափերն ու բովանդակությունը, իսկ Անկախ տեխնիկական աուդիտորը մոնիտորինգի է ենթարկելու տեխնիկական հարցերի մասով հաշվետվողականության ճշգրտությունը:
- (գ) Վարձակալը յուրաքանչյուր տարվա սկզբից 60 օր առաջ պարտավոր է ներկայացնել հաջորդ Պայմանագրային տարվա Բիզնես պլանը՝ ներառյալ ուսուցման պլանը:
- (դ) Վարձակալը պարտավոր է յուրաքանչյուր տարվա սկզբից 60 օր առաջ ներկայացնել հաջորդ Պայմանագրային տարվա Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը, իսկ Պայմանագրային առաջին տարվա համար՝ Մեկնարկային օրվանից 90 օր հետո:
- (ե) Վարձակալը պարտավոր է յուրաքանչյուր Պայմանագրային տարվա մինչև Հուլիսի 1-ը ներկայացնել նախորդ Պայմանագրային տարվա Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի /ՊԿԱԾ/ իրականացման հաշվետվությունը:

### **(4). Կիսամյակային հաշվետվություններ**

- (ա) Վարձակալը յուրաքանչյուր Պայմանագրային տարվա նախորդ վեց ամիսների համար պարտավոր է ներկայացնել հավաքագրման, վճարումների և ծախսերի տվյալները /ներառյալ ՊԿԱԾ-ով կատարված/: Տվյալները պետք է ներկայացվեն ըստ Բաժանորդների խմբերի և տեղեկություններ պարունակեն սոցիալապես անապահով խմբի Բաժանորդների վերաբերյալ:

### **(5). Եռամսյակային հաշվետվություններ**

- (ա) Յուրաքանչյուր Պայմանագրային տարվա առաջին երեք եռամսյակների հաշվետվությունները Վարձակալի կողմից պետք է ներկայացվեն համապատասխան եռամսյակների ավարտից հետո 45 օրյա ժամկետում, որտեղ 1-ին եռամսյակը սահմանվում է որպես հունվարի 1-ին



սկսվող և մարտի 31-ին ավարտվող, 2-րդ եռամսյակը՝ ապրիլի 1-ին սկսվող և հունիսի 30-ին ավարտվող, իսկ 3-րդ եռամսյակը՝ հուլիսի 1-ին սկսվող և սեպտեմբերի 30-ին ավարտվող ժամանակահատված: Վարձակալի եռամսյակային հաշվետվությունը պետք է ներառի կորպորատիվ, տեխնիկական և ֆինանսական առումով համապատասխան եռամսյակի ընթացում արձանագրված առաջընթացը, ինչպես նաև Հավելված 6-ում ներկայացված հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) և Հավելված 6-ում ներկայացված ներքին համեմատական ցուցանիշների (ՆՀՑ) գծով եռամսյակային առաջընթացը: Եռամսյակային հաշվետվությունների գծով հաստատում չի պահանջվում:

## **(6). Ամսական հաշվետվություններ**

(ա) Վարձակալը ամսական հաշվետվությունները պետք է ներկայացնի յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 20 օրյա ժամկետում: Վարձակալի ամսական հաշվետվությունը պետք է ներառի կորպորատիվ, տեխնիկական և ֆինանսական առումով համապատասխան ամսվա ընթացում արձանագրված առաջընթացը, ինչպես նաև Հավելված 6-ում ներկայացված հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) և Հավելված 6-ում ներկայացված ներքին համեմատական ցուցանիշների (ՆՀՑ) գծով ամսական առաջընթացը: Ամսական հաշվետվությունների գծով հաստատում չի պահանջվում:

## **(7). Հատուկ դեպքերի համար հաշվետվություններ**

Վարձակալը պարտավոր է հաշվետվություններ ներկայացնել Վթարների, դժբախտ պատահարների և տեղի ունեցած այն իրադարձությունների վերաբերյալ, որոնք կարող են վնաս հասցնել Վարձատուին որպես ջրային տնտեսության համար պատասխանատու պետական մարմին: Վթարների մասին Վարձակալը պարտավոր է անմիջապես (առանց անտեղի ձգձգման) հեռախոսազանգի միջոցով տեղեկացնել Վարձատուին և գրավոր հաշվետվություն ներկայացնել 3 օրվա ընթացքում:

**(8). ՄՖԿ գնումների իրականացման, սոցիալական և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման հաշվետվություններ**

- (ա) Վարձակալը ՄՖԿ գնումների վերաբերյալ պարտավոր է հաշվետվություններ ներկայացնել՝ համաձայն ՄՖԿ գնումների ընթացակարգերի պահանջների:
- (բ) Շրջակա Միջավայրի վերաբերյալ Հաշվետվությունները պետք է ներկայացվեն՝ համաձայն Կիրառվող օրենսդրության և համապատասխան ՄՖԿ կիրառելի ստանդարտների, եթե վերջիններիս համապատասխանությունը պահանջվում է ՄՖԿ կողմից:
- (գ) Սոցիալական ազդեցության մոնիտորինգ. Վարձակալը պարտավոր է սոցիալական ազդեցության մոնիտորինգի տարեկան ծրագիր կազմել, որը պետք է ներառի. կայուն, բարձրակ, 24-ժամյա ջրամատակարարման ապահովման ուղղությամբ գրանցված առաջընթացը, ջրամատակարարման ծառայությունների հասանելիությունը բոլոր սոցիալական խմբերի համար, և շտկիչ գործողությունների նկարագրություն այն դեպքերի համար, երբ ծրագրի նպատակները բավարար կերպով չեն իրագործվել:

**Ներկայացվող Հաշվետվությունների ձևաչափը**

Վարձակալը պարտավոր է Վարձատուին առաջարկել տարբեր հաշվետվությունների համար նախատեսված ձևաչափերը Վարձակալության Մեկնարկային ժամկետից հետո ամենաուշը 60 օր հետո: Վարձատուն պարտավոր է 30 օրվա ընթացքում հաստատել առաջարկված ձևաչափերը կամ չհաստատելու դեպքում Վարձակալին տեղեկացնել ձևաչափերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին: Վարձատուն կարող է անհրաժեշտության դեպքում Վարձակալին առաջարկել վերանայել համապատասխան ձևաչափերը՝ հաշվի առնելով Անկախ տեխնիկական աուդիտորի կարծիքը՝ այդ մասին տեղեկացնելով Վարձակալին:

## ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀԱՅՏԱՏՈՒԻ ՀԱՅՏ

## ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՁԵՎ

Ում՝ Ջրային տնտեսության պետական կոմիտեին  
ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փ. 13 ա  
(այսուհետ՝ «Վարձատու»)

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Մենք հղում ենք կատարում Վարձակալության պայմանագրին (այսուհետ՝ «Պայմանագիր»)՝ ստորագրված (նշել ամսաթիվը) Ձեր, (նշել Հայտատուի անվանումը) (այսուհետ՝ «Հայտատու») և (նշել Վարձակալի անվանումը) (այսուհետ՝ «Վարձակալ») ընկերությունների միջև՝ Հայաստանում «Երևան Զուր», «Հայջրնուղկոյուղի», «Լոռի-Ջրնուղկոյուղի», «Շիրակ-Ջրնուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի և այլ գույքի վարձակալության վերաբերյալ: Մենք ընդունում ենք, որ սույն Կատարողական երաշխիքի նպատակով՝ **Անկախ տեխնիկական աուդիտորի** (ԱՏԱ) ընտրության մասին մեզ պետք է ծանուցվի Վարձատուի և Վարձակալի կողմից մեկ գրությամբ՝ ստացականով պատվիրված նամակով կամ հատուկ առաքիչ ծառայության միջոցով (այն է՝ «Դի-էյջ-էլ», «Ֆեդէքս» և այլն): Մենք ընդունում ենք, որ սույն Կատարողական երաշխիքի նպատակով «Ժամկետի ավարտին նախորդող վերջին ամբողջական օրացուցային տարի» ձևակերպումը կնշանակի 2031 օրացուցային տարին: Մենք ընդունում ենք, որ սույն նամակում մեծատառերով արտացոլված ձևակերպումները կհամապատասխանեն Պայմանագրում սահմանված ձևակերպումներին:

Սույն նամակով մենք՝ ներքոստորագրյալներս, (բանկի անվանումը), բանկ (կամ ընկերություն), որը գործում է համաձայն (բանկի երկրի) օրենքների և ունի գրանցված/գլխավոր գրասենյակ հետևյալ հասցեով (բանկի հասցեն) (այսուհետ՝ «**Բանկ**») սույնով վերջնականապես երաշխավորում ենք Պայմանագրի համաձայն ձեր նկատմամբ Հայտատուի և Վարձակալի պարտավորության վճարումը՝ 3,024,000,000 (երեք միլիարդ քսանչորս միլիոն) ՀՀ դրամի չափով և արժեքով, ինչպես նշված է Պայմանագրի ԸՊ Հոդված 7.13-ում: Մենք ընդունում ենք, որ այս գումարը երեք (3) անընդմեջ օրացուցային տարիների ընթացքում Վարձատուի կողմից չօգտագործման դեպքում կարող է նվազեցվել մինչև իր սկզբնական արժեքի հիսուն (50) տոկոսը, եթե առկա է Վարձատուի և Վարձակալի կողմից համատեղ ստորագրված և ստացված ծանուցումը, որը Վարձատուի կողմից կուղարկվի վերը նշված մեր հասցեին՝ ստացականով պատվիրված նամակով կամ հատուկ առաքիչ ծառայության միջոցով (այն է՝ «Դի-էյջ-էլ», «Ֆեդէքս» և այլն)՝ հաստատելով, որ Կատարողական երաշխիքի գումարը պետք է նվազեցվի մինչև իր սկզբնական արժեքի հիսուն (50) տոկոսը: Ժամկետի վերջին տարվանից, ինչը նշանակում է Պայմանագրի ժամկետի ավարտին նախորդող վերջին մեկ ամբողջական օրացուցային տարին, սույն Կատարողական երաշխիքի գումարն ու արժեքը կկազմի 100 %, ինչպես արդեն նշվել է:

Մենք պարտավորվում ենք սույն Կատարողական երաշխիքի համաձայն վերը նշված գումարի սահմաններում վճարել նախատեսված որևէ գումար կամ գումարներ, եթե Հայտատուն կամ Վարձակալը որևէ պատճառով ի վիճակի չլինեն իրականացնելու Պայմանագրի պահանջները կամ որևէ կերպ խախտեն Պայմանագրով նախատեսված պարտականությունները՝ Ձեր կողմից այդ մասին ստացված առաջին գրավոր պահանջի հիման վրա, որը պատշաճ կերպով ստորագրված կլինի Ձեր լիազորված ներկայացուցչի կողմից (և որի իսկությունը կստուգվի Ձեր

բանկի կողմից) և որին կցված կլինի նաև Անկախ տեխնիկական աուդիտորի հայտարարագիրն առ այն, որ Հայտատուն և Վարձակալը Պայմանագրով նախատեսված պարտականությունների առումով խախտումներ ունեն, առանց Ձեր կողմից դրա հիմքերի կամ պատճառների ներկայացման անհրաժեշտության, և առանց Հայտատուին կամ Վարձակալին իրավունք տալու վիճարկել կամ քննարկել այդ պահանջը: Սույնով մենք հրաժարվում ենք մինչև մեզ պահանջ ներկայացնելը Հայտատուին կամ Վարձակալին Ձեր կողմից պահանջ ներկայացնելու անհրաժեշտությունից:

Սույն Կատարողական երաշխիքի ներքո մենք պարտավորվում ենք վճարել հետևյալ երկու գումարներից նվազագույնը՝ Ձեր պահանջած գումարը կամ սույն Կատարողական երաշխիքով սահմանված գումարը, սույն Կատարողական երաշխիքի գործողության ժամկետի ընթացքում համապատասխան կարգով ներկայացված պահանջի առկայության դեպքում՝ առանց իրավունք վերապահելու ճշտելու, թե արդյոք վճարումը պահանջվում է օրենքով:

Սույն Կատարողական երաշխիքը գործում է .... (նշել ամսաթիվը, երբ է սկսվում երաշխիքի գործողությունը՝ համաձայն ԸՊ Հոդված 1.1.-ի ) մինչև .... (նշել ամսաթիվը, երբ կավարտվի երաշխիքի գործողությունը՝ համաձայն ԸՊ Հոդված 3.2-ի): Սույն Կատարողական երաշխիքի վավերականությունը, կազմումն ու կատարումը կարգավորվում և մեկնաբանվում են Միացյալ Թագավորության օրենսդրությամբ:

Սույն Կատարողական երաշխիքից կամ դրա կապակցությամբ Բանկի և Վարձատուի միջև ծագած ցանկացած վեճ վերջնականապես պետք է կարգավորվի Փարիզի Միջազգային առևտրի պալատի (ԱՄՊ) Հաշտեցման և արբիտրաժային կանոնների ներքո («Արբիտրաժային կանոններ»)՝ Արբիտրաժային կանոնների համաձայն նշանակված երեք (3) դատավորներից կազմված արբիտրաժային դատարանի կողմից: Սույն Կատարողական երաշխիքի ներքո ցանկացած արբիտրաժային դատավարություն, Կողմերի միջև այլ համաձայնություն չլինելու դեպքում, կվարվի Իտալիայի Հոսմ քաղաքում, և բոլոր դեպքերում պաշտոնական լեզուն կլինի անգլերենը:

Բացառությամբ այստեղ նշված փաստաթղթերից ոչ մի այլ փաստաթուղթ կամ գործողություն չի պահանջվելու՝ ի հեճուկս ցանկացած այլ կիրառվող օրենքի կամ կանոնակարգի:

Սույն Կատարողական երաշխիքի ներքո մեր պարտավորությունը գործողության ավարտից անմիջապես հետո իրավաբանական ուժ չի ունենա՝ անկախ նրանից այն կվերադարձվի, թե ոչ, և որևէ պահանջ չի կարող ներկայացվել գործողության ավարտից հետո կամ Ձեր պահանջով մեր կողմից վճարված գումարների ամբողջական գումարը ստորև երաշխավորված գումարին հավասարվելիս՝ կախված այն բանից, թե որն ավելի վաղ կլինի:

Սույն Կատարողական երաշխիքի ներքո բոլոր ծանուցումները պետք է ներկայացվեն ստացականով պատվիրված նամակով կամ հատուկ առաքիչ ծառայության միջոցով (այն է՝ «Դի-էյջ-էլ», «Ֆեդէքս» և այլն)՝ սույնում ներկայացված կամ Կողմերի միջև առաջարկված այլ հասցեներով:

Մենք սույնով համաձայնվում ենք, որ Պայմանագրի որևէ մասը կարող է փոփոխվել, թարմացվել, երկարաձգել, ձևափոխել, զիջվել, բաց թողնվել կամ դուրս հանվել Ձեր և Վարձակալի միջև փոխադարձ համաձայնությամբ, որի հետ կապված սույն Կատարողական երաշխիքը կարող է փոխանակվել կամ հանձնվել առանց որևէ կերպ ազդելու մեր պարտավորությունների վրա, առանց մեզ տեղեկացնելու անհրաժեշտության, կամ մեր կողմից լրացուցիչ համաձայնության, հաստատման կամ երաշխիքի անհրաժեշտության՝ այնուամենայնիվ, ընդունելով, որ երաշխավորված գումարը չպետք է ավելանա կամ պակասի:

Որևէ կիրառվող օրենսդրության ներքո որևէ գործողություն, դեպք կամ պայման չի կարող ազդել սույն Կատարողական երաշխիքով մեր պարտավորությունների կատարման վրա, և մենք հրաժարվում ենք մեր կողմից նման օրենքների օգտագործման մեր իրավունքից, այնպես որ բոլոր առումներով Կատարողական երաշխիքի ներքո մեր պարտավորությունները պետք է լինեն ոչ պայմանական և ոչ ետ կանչման ենթակա:

Հարգանքով՝  
[Բանկի անվանումը]

---

Լիազոր ներկայացուցչի ստորագրությունը

## ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

## ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ